

Արարատի և

Կարսի շրջան

1935

Արարատի և Կարսի շրջան

657

7-25

25 SEP 2010

Պալատական բոլոր յերկրների, միացե՛մ:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԶԱՆԳԱՐԳՈՒԹՅՈՒՆ

ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՑԵՎ ՀՐԱՋԱՆԳՆԵՐ
1935 թ.
ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ

657
2-25

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԶԱՆԳԱՐԳՈՒԹՅՈՒՆ

ՍՈՑՈՒԶՈՐԳՈՒԶՈՏԻ

1935



ԱՍՖԽՀ-Ի ԳԵՐԱԳՈՒՅՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐԿՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՅՈՒՑԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՅԱՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՍՖԽՀ-ի Գերագույն Տնտեսական Խորհուրդը ժողովում ե.—

1. Առաջարկել Ժողովրդա-Տնտեսական Հաշվառման Անդրկովկասյան Վարչությանը՝ այս տարվա ապրիլի 15-ից մինչև մայիսի 15-ն ԱՍՖԽՀ-ում անցկացնել առևտրական ցուցակադրություն՝ «1935 թվականին առևտրական ցուցակադրություն անկացնելու վերաբերյալ», ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի 1934 թվականի նոյեմբերի 1-ի ժողովման հիման վրա:

2. Պարտավորեցնել ԱՍՖԽՀ-ի Ներքին Առևտրի Ժողովրդական Կոմիտեին, Զախոյուզին, Նաև Անդրկովկասյան ու Հանրապետական բոլոր առևտրական կազմակերպությունների ղեկավարներին, անմիջապես անցնել ցուցակադրության նախապատրաստական աշխատանքներին համաձայն Ժողովրդա-Տնտեսական Հաշվառման Անդրկովկասյան Վարչության ցուցումների, անվերապահորեն ապահովելով բոլոր առևտրական կազմակերպություններում յեռամսյակային հաշվետվությունների կազմումը վոչ ուշ, քան մինչև այս տարվա ապրիլի 25-ը:

3. Հանձնարարել ԱՍՖԽՀ-ի կազմի մեջ մտնող հանրապետությունների Ժողկոմխորհներին՝ պարտավորեցնելու չրջանային գործադիր կոմիտեներին, իրենց հսկողության տակ առնել առևտրական ցուցակադրության անցկացումը և Ժողովրդա-տնտեսական հաշվառման մարմիններին անհրաժեշտ ոգնություն ցույց տալ այդ աշխատանքում:

ԱՍՖԽՀ-ի Ժողկոմխորհի և Գերտնտխորհի նախագահ՝ Ղ. ՄՈՒՍՍԻՔԵԿՈՎ

ԱՍՖԽՀ-ի Ժողկոմխորհի և Գերտնտխորհի գործերի կառավարիչ՝ ՅԱ. ՎԱՐՁԻԵԼԻ

Սրբազրիչ Ա. Հախվերդյան

Գլավխրա № 192 Գապ. № 395 Տիրաժ 700

Պետհրատի տպարան Յերևան

**ՀԱՅԿ ՏԵՐՐԻՏՈՐԻԱՅՈՒՄ 1395 թ. ԱՊՐԻԼԻ
15-ԻՑ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀԱՅԿ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Խորհրդային առևտրի զարգացման պետական պլանն ապահովելու նպատակով և ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1934 թ. նոյեմբերի մեկի վորոշման հիման վրա ժողովրդական կոմիսարների խորհուրդը վարձու է. —

1. Հանձնարարել ՀՍԽՀ Ժողտնտհաշվառման վարչությանը 1935 թ. ապրիլի 15-ից մինչև մայիսի 15-ը, կատարել մեծածախս և մանրածախս առևտրական ձեռնարկությունների ու նրանց կադրերի հաշվառում:

2. Հաշվառման կազմայանի հաջող իրականացումն ապահովելու և մասսայական-բացատրական կամպանիան ղեկավարելու համար Ժողտնտհաշվառման վարչության կից կազմակերպել հաշվառման հանրապետական հանձնաժողով՝ Ժողտնտհաշվառման պետ՝ ընկ. Վ. Հովսեփյանի նախագահությամբ և հետևյալ հիմնարկների ու կազմակերպությունների ղեկավարների մասնակցությամբ. — ընկ. ընկ. Ա. Դաստախյանի (Ներքառժողկոմատ), Ա. Կոստանյան (Հայկոոպ), Ա. Զոհրաբյան (Հայառ), Չախմախչյան (Մոունդառ), Հ. Յերգնիկյան (Հայտնարկոոպ), Ա. Շահգեղյան (Հաշվ-կոոպմիություն), Ս. Մելիք-Հովսեփյան (Մոունդարդ-Ժողկոմատի տեսչություն), Պետառևտրի և կոոպերացիայի աշխատողների արհմիության կենտրոնական վարչության նախագահներ, ԼԿՅԵՄ Կենտկոմի ներկայացուցիչ և Ժողտնտհաշվառման վարչության Առևտրի հաշվառման բյուրոյի պետ՝ Լ. Շահրադյան:

3. Քաղխորհուրդներին և շրջործկոմներին կից 1935 թ. մարտի 25-ից հիմնել քաղաքային և շրջանային հանձնաժողովներ՝ նախագահությամբ համապատասխան քաղխորհուրդի կամ շրջործկոմի նախագահի և մասնակցությամբ Ժողտնտհաշվառման շրջտեսուչների, Ներքառժողկոմատի տեղական բաժանմունքների, շրջանային առևտրական կազմակերպությունների ղեկավարների, ՀԱՄԽ-ի լիազորների և ԼԿՅԵՄ շրջկոմների ներկայացուցիչների:

Հանձնաժողովները վրա դնել հաշվառման հետ կապված մասսայական-բացատրական աշխատանքների և կազմակերպչական ու որացուցային պլանի իրացման պատասխանատվությունը:

4. Հաշվառման նախապատրաստական աշխատանքների հաջողության, հաշվառման ձևերը ճշտությամբ լրացնելու և Ժողտնտհաշվառման մարմիններին ներկայացնելու ամբողջ պատասխանատվությունը դնել առևտրական-կոոպերատիվ կազմակերպությունների և ձեռնարկությունների ղեկավարների վրա ըստ պատկանելույն (վարչության նախագահի, առևտրական կազմակերպության, գրասենյակի բազայի գերեկտորի, խանութի վարչի, պահեստապետի և այլն):

5. Առաջարկել բոլոր առևտրական ձեռնարկությունների ղեկավարներին մարտի 25-ից վոչ ուշ ապահովել ստորին ցանցն ամսական ու յեռամսյա հաշվետվության ձևերով և ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները, վորպեսզի 1935 թ. առաջին յեռամսյակի հաշվետվությունն սկզբնական առևտրական և կոոպերատիվ կազմակերպություններում (գյուղկոոպ, Փ. Բ. Կ. բան. մատ. բաժիններ, պահեստներ, միջըջանային բազաներ, արդյունաբերական բազաներ և այլն) պատրաստ լինի 1935 թվի ապրիլի 15-ից վոչ ուշ, շրջանային կազմակերպություններում (շրջապառկոոպ-միություն, պետառևտրի շրջանային բաժանմունքներ և այլն) ապրիլի 20-ից վոչ ուշ, և հանրապետական կազմակերպություններում՝ 1935 թ. ապրիլի 25-ից վոչ ուշ:

6. Առաջարկել Որդունտի ՀՍԽՀ բաժանմունքին՝ յեռամսյա հաշվետվության ձևերի պատվերներն առևտրական կազմակերպություններից ընդունել և կատարել հերթից դուրս, ամենակարճ ժամանակամիջոցում:

7. Առաջարկել հանրապետական և շրջանային առևտրական կազմակերպություններին՝ ապրիլի 15-ից մինչև մայիսի 10-ը ժողտնտհաշվառման վարչության և նրա տեղական մարմինների տրամադրության տակ դնել ստուգված և վորակյալ աշխատակիցներ, վորպես միջշրջանային հրահանգիչներ և ցուցակագրողներ:

8. Առաջարկել շրջործկոմներին և առևտրական կազմակերպություններին՝ ամբողջ հաշվառման ժամանակամիջոցում ապահովել հրահանգիչներին և ցուցակագրողներին փոխադրական միջոցներով:

9. Հանձնարարել ՀԱՄԽ-ին և պետառևտրի ու կոոպերացիայի աշխատողների կենտրոնական վարչություններին՝ լայն մասսայական աշխատանք ծավալել առևտրա-կոոպերատիվ ապարատի բոլոր ողակներում, սահմանելով հասարակական վերահսկողություն հաշվառման բաժինների աշխատանքի վրա և ապահովելով պահանջվող հաշվետվությունների կազմումը հաշվառման սկզբին:

10. Առաջարկել մամուլի հանրապետական և շրջանային մարմիններին՝ լուսարանել մամուլի մեջ նախապատրաստական աշխատանքների և առևտրական հաշվառման ընթացքը:

11. Առաջարկել ժողտնտհաշվառման վարչության կից Հանրապետական հանձնաժողովին՝ կազմել պարզեցման ֆոնդ հաշվառման աշխատանքներում աչքի ընկնող կազմակերպություններին, ձեռնարկություններին և առանձին աշխատակիցներին պարզեցություն համար:

Ժողովրդական կոմիտեների եռօրյի նախագահ՝

Ա. ԳՈՒԼՈՅԱՆ

Ժողովրդական կոմիտեների եռօրյի գործերի կառավարչի տեղակալ՝ Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԺՈՂՏՆՏՀՍԵՎԱՌՄԱՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ

1935 թ. մարտի 10-ին.

ԱՍՖԽՀ տերրիտորիայի վրա առևտրական կադրերի և առևտրական ձեռնարկությունների համամիութենական հաշվառում անցկացնելու մասին՝

1. ԽՍՀՄ Ժողկոմխորհի և Անդրժողկոմխորհի 1935 թ. մարտի 9-ի վորոշման համաձայն՝ 15/4 մինչև 15/5 անցկացնել ԱՍՖԽՀ տերրիտորիայի վրա առևտրական ձեռնարկությունների և կադրերի համամիութենական հաշվառում, վորի բոլոր կազմակերպչական ձեռնարկումներն ու ցուցակագրման արդյունքների մշակումը դնել առևտրական հաշվառման Անդր-կովկասյան Բյուրոյի և Հանրապետական ԺՏՀՎ-ների վրա:

2. Սահմանել հաշվառման նյութերի մշակման հետևյալ ժամկետները.—

ա) հանրապետական ԺՏՀՎ համար նախնական հանրադրումները 25/5-ին, իսկ վերջնական հանրադրումները 15/9-ին.

բ) Անդրկովկասյան հաշվառման Բյուրոյի համար՝ նախնական ամփոփումները 10/6, իսկ վերջնականը 15/11:

3. Յելնելով 1935 թ. առևտրական հաշվառման տնտեսական-քաղաքական կարևորագույն նշանակությունից, վորը նպատակ ունի ապահովելու խորհրդային առևտրի զարգացման պետական պլանը առաջարկել

Առևտրի Հաշվառման Բյուրոյին Հաշվառման վողջ աշխատանքներն իր բոլոր մասերով անցկացնել ներգրավելով այդ աշխատանքներում անդրկովկասյան և հանրապետական, նույնպես և չրջանային առևտրական և կոոպերատիվ բոլոր կազմակերպություններին և պետառևտրի ու կոոպերացիայի աշխատողների լայն մասնակցություն:

4. ԱՍՖԻՀ Ժողկոմխորհի վորոշման համաձայն պարտադրել Անդրներքառթողկոմատին, Ձախոյուզին, հանրապետական ներքառթողկոմատներին, Ագերտի-Փակին, Ցեկավչիրուն, Հայկոոպին, Ախոյուզին, Անդերձան ՈՐՄ-ին, ԲՍՊՈ, ՏՍՊՈ և այլն բոլոր նախապատրաստական միջոցառումներն անցկացնել այն հաշվով, վորպեսզի մինչ ապրիլի 15-ը հաշվառման սկզբնական օրը (տեղերում՝ ստորին ողակներում ունենան բոլոր խանութների, կրպակների, պահեստների, կոոպերատիվների և այլն վերաբերյալ 1935 թ. 1-ին յեռամսյակի պատրաստի հաշվետվությունները հաստատված չենքով, վորոնք պետք է ապահովեն, վորպեսզի լինեն ոտուգված տվյալներ հետևյալ հատվածներով.—

ա) տվյալներ մեծաքանակ և մանրավաճառ ցանցի և առևտրական կադրերի քանակի ու կազմի մասին—առ 1935 թ. ապրիլի 15-ը:

բ) տվյալներ՝ մեծաքանակ և մանրավաճառ ցանցի ու կադրերի բաշխումն ըստ առևտրական սխտեմների, առանձնացնելով գյուղական և քաղաքային վայրերը:

գ) տվյալներ՝ մանրավաճառ առևտրացանցի կազմի մասին ըստ նրանց կարողության, չրջանառության ունակության ու մասնագիտացման:

դ) տվյալներ՝ մեծաքանակ ապրանքաչրջանառության պահեստային ցանցի ու պահեստային շնտեսության մասին:

ե) տվյալներ՝ մանրավաճառ և մեծաքանակ ապրանքաչրջանառության ծավալի մասին—1935 թ. 1-ին յեռամսյակում:

զ) տվյալներ՝ սպառողին սպասարկելու վորակի

մասին և մեծաքանակ և մանրավաճառ ցանցի, նյութական—տեխնիկական վիճակի մասին:

ը) տվյալներ՝ մեծաքանակ ու մանրավաճառ ցանցի ոգտավետության մասին:

թ) տվյալներ՝ ապրանքաչարժման մասին:

ժ) տվյալներ՝ առևտրական կադրերի կազմի մասին:

5. Առևտրական Հաշվառման հանրապետական բյուրոներին Անդրբյուրոյի ցուցմունքների և հաշվառման կազմալանի հիման վրա նախապատրաստել և անցկացնել հանրապետությունում և առանձին չրջաններում բոլոր անհրաժեշտ միջոցառումները մասնավորապես՝

ա) առևտրական կազմակերպությունների վերջնական ճշգրիտ ցուցակների կազմելը: Ըստ հանրապետության և ըստ առանձին չրջանների:

բ) հաշվառման ֆինանսական պլանի կազմելն ու հաստատել տալը:

գ) հաշվառման բլանկների տպագրության կազմակերպելը (№№ 1, 2, 3, 4, 6 և 7) համապատասխան հանրապետության ազգային լեզվով (ժամկետ՝ մարտի 15-ը):

դ) հաշվառումն անցկացնելու համար անհրաժեշտ կադրերի ընտրելն ու պատրաստելը չրջանառությունների և ցուցակադրողների հրահանգման կազմակերպելը:

6. Առաջարկել հաշվառման Անդրբյուրոյին հրատարակել մի բրոշյուր վրացերեն, թուրքերեն, հայերեն և ռուսերեն լեզուներով— առևտրական հաշվառման մասին պետության վորոշումներով և բլանկները լրացնելու վերաբերյալ հրահանգներով:

7. Առաջարկել առևտրի հաշվառման անդրկովկասյան և հանրապետական բյուրոներին, նույնպես և բոլոր չրջանառություններին իՍՂՄ կենտրոնի և Ժողկոմխորհի 1933 թ. նոյեմբերի 27-ի վորոշման հիման վրա, անմիջապես պատասխանատվության յենթարկելու այն անձնավորություններին, վորոնք կզանխեն մեղավոր սխալ տեղեկություններ տալու համար, նույնպես և

ներանց, վորոնք կխախտեն ցուցակագրման նյութերը
ժողտնտհաշվարչության ներկայացնելու ժամկետները:

8. Անդրհաշվառման Բյուրոյին առանձնացնել պար-
գեատրման ֆոնդ՝ հաշվառման ընթացքում աչքի ընկ-
նող շրջտեսուհներին և մյուս աշխատողներին պարգեա-
տելու համար:

ԱՍՅԽՀ ժողտնտհաշվառման վարչության պետ՝

ՊԵՉՅՈՐՍԿԻՑ

1935 թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՌԵՏՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊ- ՉԱԿԱՆ ԹՐԱԳԻՐԸ

Ներքևում բերվող նյութերն իրենցից ներկայաց-
նում են կազմպլանի համառոտ բովանդակությունը,
վերամշակված ԺՏՀՎ շրջ. և քաղ. տեսչությունների
համար:

Ցուցմունքներ հաշվառման ոբյեկտների և առան-
ձին ձևերի լրացման տեխնիկայի մասին տրվում են
հատուկ հրահանգներով, ղեկավարած այս բրոշյուրում:

1. ՀԱՇՎԱՌՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՅԵՎ ԾԱՎԱԼԸ

1. Առևտրի համամիութենական հաշվառումը կա-
տարվում է ԽՍՀՄ Պետպլանի ժողտնտհաշվառման
կենտրոնական վարչության կողմից ԽՍՀՄ-ի ժողկոմ-
խորհի 1934 թ. նոյեմբերի 1-ի վորոշման հիման վրա:

2. Հաշվառումը նպատակ ունի ապահովել խորհրդ-
րային առևտրի հետագա զարգացման պլանը ճշգրիտ
տվյալներով՝

ա) մեծաքանակ և մանրափաճառ առևտրական
ցանցի և նրա կադրերի թվի մասին, առ 15-ն ապրիլի
1935 թ.

բ) մեծաքանակ և մանրափաճառ առևտրական ցան-
ցի և նրա կադրերի բաշխման մասին ըստ առևտրական
օրստեմների և հանրապետությունների, առանձնացնե-
լով գյուղական և քաղաքային վայրերը:

դ) մանրավաճառ առևտրական ցանցի ըստ ունեւորութեան և մասնադիտացման.

զ) մեծաքանակ ապրանքաշրջանառութեան պահեստների ցանցի թվի և պահեստային տնտեսութեան գրութեան մասին.

յե) 1935 թ. առաջին յետամսյակի մեծաքանակ առևտրական շրջանառութեան մասին.

ե) մեծաքանակ և մանրավաճառ ցանցի նյութական, տեխնիկական դրութեան մասին.

ը) մանրավաճառ և մեծաքանակ առևտրական ցանցի ողտավեսութեան մասին. (րենտաբիլնոստ).

թ) ապրանքաշարժման մասին.

ժ) առևտրական կադրերի կազմի մասին:

3. Առևտրական հաշվառման յենթակա յեն առ 15-ն ապրիլի, 1935 թ. գործող կենտրոնական և տեղական նշանակութեամբ ունեցող առևտրական կազմակերպութեանների բոլոր ձեռնարկութեանները և կադրերը, վորոնք գրադվում են լայն սպառման ապրանքների, արտադրական-տնտեսական կահկարասիների և սննդամթերքների վաճառքով, աշխնքն.

Ներքառժողկոմատի մեծաքանակ և մանրավաճառ պետական ձեռնարկութեանները, Սննդի Արդյունաբերութեան Ժողկոմատի, Թեթև Արդյունաբերութեան Ժողկոմատի, Մանր Արդյունաբերութեան Ժողկոմատի և այլ միութենական և հանրապետական նշանակութեամբ ունեցող ժողկոմատների պետական առևտրական միավորումները և տրեստներին ու գործարաններին կից մեծաքանակ և մանրավաճառ առևտրական ձեռնարկութեանները: Բոլոր ժողկոմատների բան. մատակարարման բաժինների (ՈՐՄ-երի) մեծաքանակ և մանրավաճառ առևտրական ձեռնարկութեաններ, սպառողական, արհեստագործական, տնայնագործական, վորսորդական, հաշմանդամների և գիւմորական կոոպերացիայի մեծաքանակ և մանրավաճառ առևտրական ձեռնարկութեանները, գեղատնային ապրանքների և գիւղիկնայի ու տանիտար իրեր վաճառող մեծաքանակ և մանրավաճառ առևտրի ձեռնարկութեանները, թղթի-գրասենյակային

ապրանքների, ուսումնական պիտույքների մեծաքանակ և մանրավաճառ առևտրական ձեռնարկութեանները, բոլոր պետական, կոոպերատիվ և այլ հրատարակչութեանների գրքեր, թղթեր և ամսադրեր վաճառող առևտրական ձեռնարկութեանները «ՏՈՐԳՍԻՆ»-ի առևտրական ձեռնարկութեանները, բոլոր հասարակական կազմակերպութեանների (Պաշտ-Ամիրաբի, Ամստոյրի, ՄՈՊՐ-ի, «Յերեսխաների բարեկամների ընկ.» և այլն) մեծաքանակ և մանրավաճառ առևտրական ձեռնարկութեանները, կոլտնտեսական կազմակերպութեանների և առանձին կոլտնտեսութեանների մանրավաճառ առևտրի ձեռնարկութեանները և այլն ու մասնավոր առևտրի ձեռնարկութեանները:

4. Մանրավաճառ առևտրում հաշվառման որչեկտ և հանդիսանում՝ խանութը, կրպակը, դեղատունը, կիոսկը, վրանը, պահեստները, վորոնք վաճառում են փոքր պարտիաներով փայտ և ածուխ տնային-տնտեսական կարիքների համար, գյուղկոոպը, փակ բանվորական կոոպերատիվ (ՁՐԿ), բան. մատ. բաժինը (ՈՐՄ), քաղկոոպը և մանրավաճառ առևտրի բոլոր վարչական ողակները:

Մեծաքանակ առևտրում՝ ինչպես առևտրական կազմակերպութեանների, նույնպես և Թեթև Արդ. Ժողկոմատի, Սննդի Արդ. Ժողկոմատի ու Տեղարդժողկոմատի առևտրական բազաները (գործարանին կից, շրջանային, միջշրջանային, հանրապետական), առևտրական բազաների պահեստները:

Շարժական և ձեռքի (չրջիկ) մանրավաճառ ցանցը (սայեր, և այլն) գրանցվում են այն առևտրական ձեռնարկութեան հետ, վորին նրանք կցված են և չեն հանձնարում հաշվառման ինքնուրույն միավորներ:

Ծանոթութեան. — Վազոն-խանութները յեն-

թակա յեն հաշվառման:

5. Առևտրական կադրերի հաշվառման որչեկտ և հանդիսանում՝ 3-րդ և 4-րդ կետերում հիշված առևտրական կազմակերպութեանների յուրաքանչյուր ողա-

կում մշտական կամ ժամանակավոր աշխատող բանվորը և ծառայողը:

Ծանոթութիւն.— 15 որից պակաս աշխատանքի հրավիրված ժամանակավոր աշխատողները յենթակա չեն ցուցակադրման:

6. Հաշվառման յենթակա չեն՝ այն առևտրական ձեռնարկութիւնները, վորոնք յենթարկվել են լիկվիդացիայի մինչ 1935 թ. ապրիլի 15-ը կամ նոր բացվածներ ապրիլի 15-ից հետո: Հասարակական սննդի ձեռնարկութիւնները (ճաշարաններ, բեստորաններ, կաֆենէր, բուֆետներ, գարեջրատներ, և հասարակական սննդի ձեռնարկութիւնների կողմից կազմակերպված չրջիկ միավորներ, բոլոր կազմակերպութիւնների միջերոգ ձեռնարկութիւնները, վորոնց հիմնական գործընէ՝ միջերման աշխատանքը (Զագոտգեռնո, Զագոտխլոպոկ և այլն). բոլոր ժողկոմատների և տնտհիմնարկների մատակարարման կազմակերպութիւնների այն բոլոր ձեռնարկութիւնները, վորոնք մատակարարում են արդյունաբերական ձեռնարկութիւնները և գյուղատնտեսութիւնը արտադրական միջոցներով (սարքավորում, հումուլթ կիսաֆարրիկատ) արտադրութեան կարիքների համար. գործարանային պահեստները. տնայնա-արհեստագործական արտեղները, տնայնագործները և միայնակ արհեստավորները, վորոնց հիմնական գործունեութիւնը արտադրութիւնն է (վերանորոգում) տրանսպորտի կազմակերպութիւնների պահեստները, շուկաներում կոլտնտեսականների, մենատնտեսների և մասնավոր անձերի կողմից կատարվող սալերից և ձեռքի առևտուրը:

2. ԺՈՂՏՆՏՀԱՇՎԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՅԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԵՍԶԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հաշվառման նախապատրաստական աշխատանքների կազմակերպումը և կատարումը՝

ա) Մասնաւ ներքառժողկոմատի չրջիազորից և ժողտնտհաշվառման վարչութիւնից չրջանում կամ

քաղաքում գործող առևտրական կազմակերպութիւնների ցուցակը, ստուգել ալդախին և կազմել չրջանի կամ քաղաքի առևտրական կազմակերպութիւնների վերջնական ցուցակ:

բ) ալդ ցուցակի հիման վրա ստանալ համապատասխան առևտրական կազմակերպութիւններից այն առևտրական ձեռնարկութիւնների ցուցակը, վորոնք գործում են առ 1-ն մարտի և հետագայում ալդ ցուցակները ճշտել մտցնելով այն ձեռնարկութիւնները, վորոնք գործում են առ 15-ն ապրիլի:

գ) կազմված ցուցակների հիման վրա բաշխել առևտրական կազմակերպութիւնները ցուցակադրման յենթաչրջանների:

դ) հաշվառման բլանկները բաշխել ըստ ցուցակադրման յենթաչրջանների և մատակարարել ցուցակադրող կազմի հաշվառման բլանկներով և հրահանգներով:

յե) սահմանել հսկողութիւն առևտրական կազմակերպութիւնների և առևտրական ձեռնարկութիւնների հաշվետվութիւնների պատրաստման ընթացքի վրա (1-ին յեռամսյակի հաշվետվութեան կազմելը, չրջանառութիւն, աշխատավարձի, խանութների և նրա ռժանդակ ձեռնարկութիւնների մակերեսի ալ տվյալների պատրաստումը):

զ) ակտիվ մասնակցել առևտրական կազմակերպութիւնների աշխատողների մեջ մասսայական-բացատրական աշխատանքի ծավալման գործում:

2. Ապահովել հաշվառման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ ցուցակադրող կադրերով:

3. Հրահանգել ցուցակադրողների և չրջանի առևտրական կազմակերպութիւնների ղեկավարներին ու ներկայացուցիչներին հաշվառման ձևերի լրացման կարգի մասին:

4. Կազմակերպել չրջանային կազմակերպութիւնների կողմից իրենց յենթակա ձեռնարկութիւններին համապատասխան կարգադրութիւնների հրատարակումը, վորով առանձին ձեռնարկութիւնների ղեկա-

վարները պարտավորվում են լրացնել բլանկները և տանել անձնական պատասխանատվություն իրենց ձեռնարկություններում հաշվառման աշխատանքները ճիշտ և ժամանակին կատարելու համար:

5. Շրջանի հաշվառման աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը, հրահանգիչներին և ցուցակագրողներին ստացված նյութերի ստուգումը և ամբողջ հաշվառման նյութերի պատրաստումը ԺՏՀՎ-ի Հանրապետական Հաշվառման Բյուրոյին հանձնվում, կատարելով հաշվառման տվյալների նախնական ամփոփում՝ ըստ հատուկ ձևի (№ 13):

6. Հնդուրյա ինֆորմացիոն տեղեկությունների ներկայացնելը ԺՏՀՎ-յան, հաշվառման աշխատանքների ինթաքի մասին ըստ հատուկ ձևի (№ 12):

7. Ներկայացնել հաշվառման աշխատանքների կատարման մասին հաշվետվություն (ղեկուցագիր):

3. ՀԱՇՎԱՌՄԱՆ ՁԵՎԵՐԸ

1. Մեծաքանակ և մանրածախ առևտրական կազմակերպության ու ձեռնարկության ամեն մի աշխատողի համար լրացվում է № 1 ձևի բլանկը:

2. Առևտրական բոլոր սիստեմների քաղաքային խանութների համար լրացվում է № 2 ձևի բլանկը: Նույն (№ 2) բլանկով ցուցակագրում են շրջանային խանութները (ռայմազ) կուլտմազները, փորոնք գտնվում են գյուղական վայրերում:

3. Գյուղական բոլոր խանութների համար (բացի շրջանային խանութների (ռայմազ) և կուլտխանութներից) լրացվում է № 3 ձևի բլանկը:

Ծանոթություն.— № 2 բլանկը լրացվում է նաև վազոն-խանութների համար, ըստ այդ խանութի հիմնական կցման վայրի:

4. Մանրավաճառ մանր առևտրական ցանցի համար լրացվում է № 4 ձևի բլանկը:

5. Քաղաքի սկզբնական առևտրական կազմակերպության համար (ՈՐՄ, Փակքանկոոպ, Քաղկոոպ) լրացվում է № 5 ձևի բլանկը:

6. Գյուղական սկզբնական առևտրական կազմակերպության համար (Գյուղկոոպ) լրացվում է № 6 ձևի բլանկը:

7. Շրջանային առևտրական կազմակերպությունների համար (Շրջապակոոպ միություն, Հայառի չքմ. բաժանմ. և այլն) և նույնպես խոշոր քաղաքների քաղապակոոպների համար լրացվում է № 7 ձևի բլանկը:

8. Սկզբնական մեծաքանակ առևտրական կազմակերպության (միջշրջանային բազա) լրացվում է № 8 ձևի բլանկը:

9. Հանրապետական Պետառևտրի և արդյունաբերական միավորումների բազայի համար լրացվում է № 9 ձևի բլանկը:

10. Հանրապետական նշանակություն ունեցող առևտրական կազմակերպության համար լրացվում է № 10 ձևի բլանկը:

11. Մեծաքանակ առևտրի ողակների պահեստներին համար լրացվում է № 11 ձևի բլանկը:

4. ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. Հաշվառման սկզբնական (կրիտիկական) ժամկետ է սահմանվում 1935 թ. ապրիլի 15-ը և հաշվի են առնվում 1935 թ. 1-ին յեռամսյակի, մարտ ամսվա և առ 1-ն ապրիլի 1935 թ. գործունեության հիմնական ցուցանիշները:

2. Հաշվառումը (ցուցակագրումը) սկսվում է 1935 թ. ապրիլի 15-ին: Այդ ժամկետին ԺՏՀՎ-ի շրջատեսուչը, նախորդ կազմված հաշվառման յենթակա ձեռնարկությունների ցուցակի մեջ, պետք է մտցնի այն բոլոր փոփոխությունները, փորոնք կատարվել են մինչև հաշվառման սկիզբը:

Շրջանի (քաղաքի) բաժանումը ըստ ցուցակագրման յենթաշրջանների և ցուցակագրողների դասավորումի ըստ այդ յե/շրջանների պետք է կատարվի այն



Հաշվով, վոր ամբողջ Հաշվառման աշխատանքը տևի 15 օրից վոչ ավել:

3. Հաշվառման բլանկների լրացումը, ներառյալ նաև կազմերի վերաբերյալ բլանկը (ձև № 1) կատարվում է ձեռնարկության ղեկավարի կողմից (որինակ՝ խանութի վարիչը մանրավաճառ ձեռնարկություններում), կամ նրա կողմից նշանակված հատուկ անձնավորության միջոցով (գլխավորապես խոշոր առևտրական կազմակերպություններում), լրացված բլանկը պետք է ստորագրված լինի կազմակերպության կամ ձեռնարկության ղեկավարի կողմից:

4. Ցուցակագրման կարգը հետևյալն է՝

Սկսած ապրիլի 10-ից մինչև ապրիլի 15-ը ցուցակագրողները պետք է չրջագայեն (անցնեն) հաշվառման յենթակա բոլոր ձեռնարկությունները, հանձնեն նրանց հաշվառման ձևերը և հրահանգեն այդ ձևերի չրացման կարգի մասին:

Սկսած ապրիլի 15-ից կատարվում է հաշվառման յենթակա բոլոր ձեռնարկությունների յերկրորդ չրջագայությունը, վորի ընթացքում կատարվում է լրացված բլանկների ստուգումը և հավաքումը:

Բոլոր բլանկները ստորագրվում են ձեռնարկության ղեկավարի և ցուցակագրողի կողմից և նույն օրը հանձնվում են չրջ. (քաղ.) տեսչին հետագա ստուգման համար:

Ցուցակագրողը պարտավոր է ըստ եյության ստուգել բոլոր հաշվառման ձևերում ցույց տրված տվյալները համեմատելով այդպիսիները մարտ ամսվա և առաջին յեռամսյակի հաշվետվությունների հետ և տեղում (խանութ, կրպակ, պահեստ) ստուգել բոլոր նրան վերաբերվող ցուցանիշները: Սխալներ հայտնաբերելու դեպքում անմիջապես ուղղել և այդ առթիվ կազմել համապատասխան ակտ հանձնելով այդպիսին նյութերի հետ միասին ԺՏՀՎ-ի չրջ (քաղ) տեսչին:

Առաջին և յերկրորդ չրջագայության ժամկետների մեջ տարբերությունը չպետք է լինի 5 օրից ավելի:

Բոլոր այն դեպքերում, յերբ բլանկների լրացում չի

կարող կատարի խանութի, կրպակի վարիչը, գյուղկոտպի նախագահը, իրեն թույլ վորակի կամ այլ պատճառների չնորհիվ, բլանկի լրացումը կատարում է ինքը ցուցակագրողը:

5. Ապրիլի 20-ին, 25-ին, 30-ին և մայիսի 5-ին չրջ. (քաղ) տեսուչը պարտավոր է ուղարկել ԺՏՀՎ-ին ամփոփ տեղեկություն հաշվառման աշխատանքների ընթացքի մասին № 12 ձևով:

Հաշվառման աշխատանքները կատարելու հետ միաժամանակ չրջ. (քաղ.) տեսուչը կազմակերպում է ցուցակագրողներից և հրահանգիչներից ստացվող նյութերի մանրամասն ստուգում, ըստ վորում նյութերի ստուգման ընթացքը պիտի կազմակերպվի այնպես, վոր չլինի չստուգված նյութերի կուտակում: Ուղղումներ և լրացումներ պահանջող բլանկները, ստուգումից անմիջապես հետո վերադարձվում են ցուցակագրողին բոլոր նկատված թերությունները վերացնելու համար:

Հաշվառման նյութերի ստուգման բոլոր աշխատանքները պետք է ավարտվեն մայիսի 5-ից վոչ ուշ, վորից հետո չրջ. (քաղ.) տեսուչը անցնում է այդ նյութերի պատրաստմանը հանրապետական ԺՏՀՎ-ին կամ նրա լիազորին հանձնելու համար:

6. Մայիսի 10-ին չրջ. (քաղ.) տեսուչը պարտավոր է ներկայացնել հանրապետական ԺՏՀՎ-ին հաշվառման ամբողջ նյութերը վերջնականապես ստուգված դրությամբ, ներկայացնելով միաժամանակ հաշվառման յենթակա բոլոր ձեռնարկությունների ցուցակը և նախնական ամփոփումը № 13 ձևով:

Նյութերը պետք է դասավորված լինեն, նյութերի հանձնման վերաբերյալ հրահանգում նախատեսված կարգով:

Նյութերի դասավորման համար պետք է պահպանվի հետևյալ կարգը՝ սկզբնական առևտրական ձեռնարկության կամ կազմակերպության բլանկը պետք է կրցված լինի վերադաս առևտրական կազմակերպության բլանկին: Որինակ Գյուղկոտպի բլանկին կից տվյալ

գյուղկոտույի խանութները, ՈՐՄ-ի բլանկին կից տվյալ ՈՐՄ-ի խանութները և այլն:

Միաժամանակ առևտրական աշխատողների անձնական քարտերը (№ 1 բլանկը) պետք է անպայման կցված լինեն տվյալ ձեռնարկության կամ կազմակերպության բլանկին:

Հաշվառման ամբողջ նյութերն ըստ ժՏՀՎ-ի ցուցմունքի չըջ. (քաղ.) տեսուչը հանձնում է կամ հանրապետական ժՏՀՎ-ին կամ նրա լիազորին:

ԽՈՐ. ԱՌԵՎՏՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲՅՈՒՐՈ

Հ Ր Ա Հ Ա Ն Ք

ԱՌԵՎՏՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂԻ ՔԱՐՏԸ ԼՐԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ՁԵՎ № 1)

№ 1 ձևով յենթակա յեն ցուցակագրման՝ առ 15-ն ապրիլի 1935 թ. առևտրական կազմակերպություններում և ձեռնարկություններում աշխատողները, վորոնք գտնվում են ինչպես մշտական, նույնպես և ժամանակավոր (15 օրից վոչ պակաս) աշխատանքում, ինչպես նրանք, վորոնք հաշվառման մոմենտին գտնվում են աշխատանքում տվյալ ձեռնարկությունում, նույնպես և նրանք, վորոնք գտնվում են գործուղման մեջ, կամ բացակայում են հիվանդության կամ այլ պատճառներով:

Ծանոթություն.— Յեթե հաշվառման մոմենտին աշխատակիցներից վորեւ մեկը բացակայում է (հիվանդ է, գտնվում է գործուղման մեջ և այլն) և չի կարող հաշվի առնվել անմիջական հարցաքննության միջոցով, նրա մասին տեղեկությունները գրանցվում են առևտրական կազմակերպությունում (ձեռնարկությունում) յեղած նրա անձնական գործի տվյալներից:

Այդ դեպքում այն հարցերը, վորոնց վերաբերյալ տեղեկությունները բացակայում են—մնում են առանց պատասխանի և գրվում է «տեղեկություններ չկա»:

Բլանկների հեռակա լրացման բոլոր դեպքերում բլանկի վերջում 29-րդ կետից հետո անպայման կատարել նշում «լրացված է հեռակա» կամ «բացակայում է»:

Հաշվառման յենթակա յեն աշխատողների հետևյալ կատեգորիաները

1) Մանրավաճառ առևտրական ցանցի ձեռնարկությունների բոլոր աշխատողները, ներառյալ տվյալ մանրածախ ձեռնարկությունը սպասարկող տրանսպորտային, պահեստային, և այլ աշխատողները:

2) Առևտրական կազմակերպությունների պահեստների բոլոր աշխատողները, ինչպես այն պահեստների, վորոնց համար պետք է լրացվի № 11 ձևի բլանկը (մեծաքանակ առևտրական կազմակերպությունների պահեստներ), նույնպես և այն պահեստների, վորոնց համար № 11 ձևի բլանկ չի լրացվելու (մանրավաճառ առևտրական կազմակերպությունների պահեստներ):

3) Բոլոր աշխատողները. ա) քաղաքային և գյուղական սկզբնական մանրավաճառ առևտրական կազմակերպությունների (ՈՐՄ-ի, փակ բանկոտայ, ԶՐԿ, քաղկոտույի, գյուղկոտույի, սովխոտրանկոտույի և այլն) վարչական ապարատի (վարչությունների գիրեկցիաների). բ) չրջանային առևտրական կազմակերպությունների (չրջապառկոտույի, պետառևտրի և այլ առևտրական չրջանային կազմակերպությունների) վարչական ապարատի, գ) միջչրջանային, հանրապետական և միութենական նշանակություն ունեցող առևտրական բազաների վարչական ապարատի. դ) հանրապետական սպասարկումիւթյան և պետառևտրի կազմակերպությունների տարատեսակների (Հայկոտայ, Հայաս):

1. Այն ժամանակավոր աշխատողները, վորոնք հրավիրված են հատուկ աշխատանքի և վորոնց աշխատավարձը հաշվի է առնվում առանձին, վորտես տվյալ կազմակերպության ցուցակային թվում (հատուկ ընդունում) չհաշվող անձնավորություններ, որինակ, այն աշխատողները, վորոնք վարձվում են բանջարեղենի կամ այլ ապրանքի վորոչ պարտիայի տեսակավորման, մաքրման բարձման-թափման համար, չենքերը մաքրելու համար կամ փայտ ջարդելու որակավորմանը և այլն:

2. Ստորին և վերադաս առևտրական կազմակերպությունների մթերման պահեստների բոլոր աշխատողները՝ մթերման կայանները, հացահատիկային պահեստները, բոլոր տեսակի հումուլթի պահեստները (որինակ՝ ուտիլիթյոյի, պուշինայի և այլն), նույնպես և բոլոր կենսամթերք մթերող պահեստները (որինակ՝ յուղի, ձվի, թռչունների և այլն):

3. Բոլոր այն աշխատողները, վորոնք անմիջականորեն զբաղված են ինչպես հատուկ վաչ առևտրական միավորումներում և վարչություններում, նույնպես և ստորին վաչ առևտրական ձեռնարկություններում, այսինքն՝ հասարակական սննդի տրանսպորտի, դյուղատնտեսություն, չինարարություն, վերամշակող և այլ արդյունաբերական ձեռնարկություններում նաև վերանորոգման արհեստանոցներում և այլ ուսանողական վոչ առևտրական ձեռնարկություններում:

Ծանոթություն.— ա) Վոչ առևտրական աշխատողները, վորոնք աշխատում են առևտրական կազմակերպությունների գրասենյակներում և վարչություններում (ի տարբերություն վոչ առևտրական հատուկ միավորումներից), յենթակա չեն հաշվառման, որինակ ճարտարագետներ, դյուղատնտեսներ, մթերողներ, տվյալ առևտրական կազմակերպությանը սպասարկող տրանսպորտի չեքերներ և այլն:

բ) Ուսան դյուղային միավորման նկատմամբ, վորը բացի մթերման և արդյունաբերություն զործունեությունից զբաղված է նաև առևտրով, հաշվառման յենթակա չեն միայն առևտրական մանրավաճառ ձեռնարկությունների աշխատողները, իսկ վարչության (գրասենյակի) աշխատակիցները հաշվի չեն առնվում:

գ) Սպառկոտպերացիայի գրասենյակների աշխատե կոչված «ընդհանուր տպարատը» այսինքն այն աշխատողները, վորոնք զբաղված են միաժամանակ և առևտրական և վոչ առևտրական աշխատանքով, յենթակա չեն հաշվառման (որինակ վարչության անդամները, պլանային և ֆինանսական բաժինները, քարտուղարությունը, մեքենագրուհիները, կրտսեր սպասարկող կազմը (ՄՈՊՐ) և այլն):

ՔԱՐՏԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Առևտրական կազմակերպության կամ ձեռնարկության հասցեն

Քաղաքում գտնվող կազմակերպությունների (ձեռնարկությունների) համար գրվում է քաղաքի անունը, իսկ դյուղական վայրերում գտնվող կազմակերպությունների (ձեռնարկությունների) համար գրվում է գյուղի անունը:

Ծանոթություն.— Քաղաքների և քաղաքատեղ վայրերի ցուցակը ուղարկված է ԺՏՀՎ-ի չրջ. քաղ. տեսուչներին:

1-ին հարց «Առևտրական կազմակերպության կամ ձեռնարկության անունը»

Գրել այն առևտրական կազմակերպության (որինակ՝ Վեդիի դյուղկոոպ, Ալահվերդու շրջապատկոոպ միություն, Լենինականի միջընկերային քաղա և այլն)

կամ առևտրական ձեռնարկության (Հայսննդառի № 3 խանութ, Յերեանի Մեխգործարանի ԶՐԿ-ի կրպակ, Քանաքեռեզեսի ՈՐՍ-ի № 4 խանութ, Իջևիանի շրջ-սպառկոոպմիության գրասենյակ) լրիվ անունը, վորի աշխատողի համար լրացվում է տվյալ քարտը: Այդ տ-նունը պիտի լինի նույնը ինչ ցույց տված կլինի կազմա-կերպության կամ ձեռնարկության համար լրացված բլանկի միայն:

Ծանոթութուն.— Այդ բլանկին պետք է կցվեն տվյալ կազմակերպության կամ ձեռնար-կության աշխատողների համար լրացված բոլոր քարտերը:

Յեթե քարտը լրացվում է առևտրական ձեռնար-կության (այսինքն խանութի, կրպակի կամ պա-հեստի) աշխատողի համար, ապա այդ կետում պիտի ցույց տալ նաև այն կազմակերպության լրիվ անունը, վորին յենթակա յե տվյալ ձեռնար-կությունը, վորպեսզի հնարավոր լինի մշակել ա-ռևտրական կադրերը ըստ առևտրական կազմա-կերպությունների:

2-րդ հարց. «Պաշտոնը, իսկ գործակատարների նկատմամբ նաև նրանց մասնագիտությունը հարցման ուրը»:

Այստեղ ցույց է տրվում լրիվ անունը, այն պաշ-տոնի, վորում աշխատակիցը աշխատում է ցուցակա-գրման մոմենտին (որինակ «խանութի վարիչ», «բակա-լեայի բաժնի վարիչ», «գանձապահ», «գնումների գոր-ծակալ», «ապրանք ջուղող», «ապրանքագետ», «հաշվառ-ման կոնսուլտանտ», «կրտսեր տնտեսագետ» և այլն): Գործակատարների վերաբերյալ անպայման պետք է ցույց տրվի բացի գրանից և նրա մասնագիտությունը ցուցակագրման մոմենտին (կանաչի վաճառող, մանու-ֆակտուրա վաճառող, գալանտերիա վաճառող և այլն) և նրա կատեգորիան կամ կարգը (ավագ գործակատար, գործակատար 1-ին կարգի, 2-րդ կարգի, 3-րդ կարգի, կրտսեր գործակատար):

3-րդ հարց. «Ազգություն» ցույց է տրվում այն ազգությունը, վորը ցույց է տալիս ինքը հարցաքննվո-ղը:

9-րդ հարց. «Ունի հարվածային կոչում» յեթե պա-տասխանը տրվում է «այո», անհրաժեշտ է վոր հար-ցաքննվողը ունենա իր մոտ հարվածայինի գրքույկ կամ նրա հարվածայինի կոչումը հաստատված լինի ձեռ-նարկության յեռանկյունու կամ աշխատակիցների ընդ-հանուր ժողովի կողմից և ստուգված լինի նրա վերց-ված պարտավ. կատարումը— 1934 թվի 4-րդ յեռամ-սյակի և 1935 թ. 1-ին յեռամսյակի:

11-րդ հարց. «Մանրամասն մատնանշել վերջին ու-սումնական հաստատության անունը վորտեղ սովորել է, կամ սովորում է»:

Պատասխանում պետք է գրվի վերջին ավարտած ուսումնական հաստատությունը կամ կուրսերը (առկա և հեռակա) լրիվ անունը: Յեթե հարցաքննվողը ա-վարտել է մի քանի ուսումնական հաստատություններ, ապա այստեղ ցույց է տրվում այն ուսումնական հաս-տատությունը, վորի տիպը ամելի բարձր է:

Ուսումնական հաստատության անվան հետ պետք է ցույց տալ և քանի դասարան ուներ նա (որինակ՝ յերեքդասյա գյուղական դպրոց, յենթնամյա դպրոց և այլն): Վոչ մի ուսումնական հիմնարկ չավարտողները և հաշվառման մոմենտին ուսուցում չստացողները պատասխանում են «չի սովորել»:

13-րդ հարց.— այս հարցին պատասխան տրվում է այն դեպքում, յերբ 12-րդ հարցին պատասխանված է «չի ավարտել», կամ «սովորում է»:

14-րդ հարց. «Ստացել է արդյոք հատուկ ա-ռևտրական պատրաստականություն»:

Պատասխանում պետք է լինի ընդգծված, «այո» կամ «վոչ»:

Դրական պատասխան տրվում է յեթե իրոք ստա-ցել է առևտրի գծով մասնագիտական ուսուցում, որի-նակ՝ խանութի վարիչների դասընթացներ, գործակա-

տարները դասընթացներ, կոոպերատիվ ինստիտուտ, տեխնիկումի նախապատրաստում և այլն, իսկ հաշվային աշխատողների համար—հաշվային առարկաների հատուկ պատրաստում (հաշվետարների կամ հաշվապահների դասընթացներ):

15-րդ հարց.— «Վորտեզ և սովորել», 14-րդ հարցի դրական պատասխանի գեպըում, այստեղ պիտի ընդգծել հարցաքննվողի կողմից անցած մասնագիտական պատրաստման ձևերից մեկը 1) մասնագիտական ուսումնական հաստատությունները (առևտրական և կոոպերատիվ ինստիտուտներ, տեխնիկումներ, առևտրական ինքնուսուցիչ միջնակարգ դպրոցներ, առևտրական աշակերտությունից դպրոցներ և այլն), 2) հատուկ կուրսերում (խանութի վարիչների դասընթացներ, հաշվետարների դասընթացներ և այլն), 3) տվել և տեխնիկումի քննություն:

Տեխպատրաստման կարգով ուսուցումը հաշվի չէ տոնվում իբրև ուսուցում, ուսումնական հիմնարկներում կամ դասընթացներում և նկատի է առնվում միայն այն դեպքում, յերբ այդ ուսուցման հետևանքով հարցաքննվողը տվել է տեխնիկումի քննություն:

16-րդ հարց.— «Հատուկ ուսումնական հաստատություն կամ կուրսերի անունը, փորտեղ սովորել է»:

Յեթե ընդգծված է 15-րդ կետի առաջին յերկու պատասխանները, այստեղ պետք է գրել մասնագիտական ուսումնական, հաստատություն կամ մասնագիտական դասընթացների (կուրսերի) անունը, որինակ՝ «Յերեանի կոոպերատիվ տեխնիկում» «Մոսկվայի հաշվետարների հեռակա դասընթացներ», «խանութի վարիչների դասընթացներ» և նմանականում և այլն: 2-ի կարելի ուսումնական հիմնարկի անունը գրել որինակ՝ ՀԿՏ այլ հարկավոր է գրել լրիվ «Հայկոպի կոոպերատիվ տեխնիկում» և այլն:

17, 18 և 19-րդ հարցեր.— «Աշխատանքի ստաժը առևտրական կազմակերպություններում, 17-րդ կետում «ընդամենը առևտրական ցանցում աշխատում

է», ցույց է տրվում քանի տարի և ամիս է ընդամենը աշխատել առևտրում, դուրս գալով բոլոր ընդմիջումները, ինչպես խորհրդային առևտրական կազմակերպություններում, նույնպես և մասնավոր առևտրում (մինչ Հոկտեմբերյան Հեղափոխությունը և Հոկտեմբերյան Հեղափոխությունից հետո): Առևտրում աշխատելու ընդհանուր ստաժը, վորը ցույց է տրված 17-րդ կետում, բաժանվում է՝ քանի տարի և ամիս աշխատել է խորհրդային առևտրական կազմակերպություններում (18-րդ հարց) և քանի տարի և ամիս աշխատել է մասնավոր առևտրում ինչպես մինչ հեղափոխությունը նույնպես և հեղափոխությունից հետո (19-րդ հարց):

Սպառողական կոոպերացիայում մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, տարած աշխատանքը պետք է հաշվել մասնավոր առևտրի աշխատելու ստաժի մեջ:

18 և 19-րդ կետերում ցույց տրված տարիների և ամիսների գումարը անպայման հավասար պիտի լինի 17-րդ կետում ցույց տրված աշխատանքի տարիների և ամիսների ընդհանուր քանակին:

20-րդ հարց.— «Վորքան ժամանակ է աշխատում տվյալ առևտրական պաշտոնում» այսինքն խանութի վարիչի, գործակառարի, խանութի վարիչի տեղակալի, սեկցիայի վարիչի պաշտոնում: Ցույց է տրվում տվյալ առևտրական պաշտոնում աշխատելու ընդհանուր ստաժը վոչ միայն տվյալ առևտրական ձեռնարկությունում, այլ և ուրիշ առևտրական ձեռնարկություններում, ներառյալ նաև մասնավոր առևտրում:

22, 23 և 24-րդ հարցերը լրացվում են միայն այն դեպքում, յեթե 21-րդ հարցում ընդգծված է «աշխատել է վարձու»:

25-րդ հարց.— «Բանվորական որվա մոտավոր ժամանակը, յերբ սխտեմատիկարար աշխատում է վաճառասեղանի մոտ ապրանք բաց թողնելով»:

Անպայման լրացվում է յուրաքանչյուր խանութի վարիչի, նրա տեղակալի, խանութի սեկցիաների և բաժանմունքների վարիչների ու նրանց տեղակալների

Համար, ըստ 1935 թ. մարտ ամսի փաստացի աշխատանքի: Ընդգծվում է պատասխանների հինգ կետերից մեկը, վորը ալելի յե Համապատասխանում 1935 թ. մարտ ամսում նրա աշխատանքի տեղում թյանը վաճառակցանի մոտ:

26-րդ հարց. «Ինչ սխտեմով է վճարվել 1935 թ. մարտ ամսվա աշխատավարձը», 1) Հաստիքային (դրույքային, ժամանակավարձ) աշխատավարձի սխտեմին վերաբերվում են այն դեպքերը, յերբ աշխատավարձը վճարվում է իբրեւ կայուն դրույք ըստ պաշտոնի:

2. «Հաստիքային պարգևատրման» (դրույքային պրեմիալ), աշխատավարձի սխտեմին վերաբերվում են այն դեպքերը, յերբ ապահովված դրույքի հետ միաժամանակ սահմանված է լրացուցիչ վճարում չըջանառության պլանի կատարման կապակցությամբ:

Հաստիքային պարգևատրման (դրույքային պրեմիալ) աշխատավարձի սխտեմին վերաբերվում են նաեւ այն դեպքերը, յերբ բացի կայուն դրույքից նախատեսված է պրեմիաների վճարում, կատարած աշխատանքի վորակի և ծավալի համեմատ, անկախ նրանից լինի այդ պրեմիան ուղիղ հարաբերական թե պրոգրեսսիվ ձևի:

3. «Գործավարձային ուղղակի» (հատավարձ) աշխատավարձի սխտեմին վերաբերվում է աշխատավարձի այնպիսի սխտեման, վորը սահմանվում է ամբողջովին արտադրանքի մեկ միավորից (որինակ—գործակատարների վերաբերյալ—չըջանառության ուղբլուց, մեքենագրուհիների—տպագրած թերթից և այլն):

4. «Գործավարձային պարգևատրման» աշխատավարձի սխտեման այն է, յերբ բացի արտադրանքի միավորից սահմանված վարձատրությունից, սահմանված է նաեւ պրեմիա պլանի գերակատարման համար կամ աշխատանքի վորակի համար, անկախ նրանից կլինի այդ պրեմիան ուղիղ հարաբերական թե պրոգրեսսիվ ձևի:

27-րդ հարց. «1935 թ. մարտ ամսի աշխատավարձի լրիվ գումարը, վորը յենթակա յե վճարման» վերցվում է աշխատավարձի վճարման տեղեկագրերից,

այն գումարը, վորը հաշվված է իբրեւ մարտ ամսվա աշխատավարձ, սովորական և արտաժամյա աշխատանքի համար, ներառյալ աշխատավարձից կատարվող բոլոր պահումները և պահվող պարտքերի գումարները:

Վորպեսզի ստացվի մարտ ամսվա միջին աշխատավարձն այդ գումարից պիտի հանել այն նախորդ ժամանակվա համար վճարվող լրացուցիչ գումարները, վորոնք մտցված են մարտ ամսվա աշխատավարձի տեղեկագրում, այսինքն, չողտագործված արձակուրդի, բնակարանային, և այլ պրեմիալ գումարները, վորոնք չեն հաշվում (մտնում) աշխատավարձի Ֆոնդի մեջ: Այստեղ չպետք է հաշվել նաեւ աշխատավարձի վրայեկը և բանուժի լրացուցիչ ծախքերը (մասնագիտական հագուստ, փոխադրական գումարներ աշխատակիցների տեղափոխման դեպքում և այլն):

28-րդ հարց. «Նույն թվում պարգևատրումների կարգով լրացուցիչ վճարումները»: Այստեղ ցույց են տրվում բոլոր լրացուցիչ պրեմիալ վճարումները, վորոնք մտնում են աշխատավարձի Ֆոնդի մեջ (27-րդ հարց):

27 և 28-րդ հարցերը լրացվում են միայն այն աշխատողների վերաբերյալ, վորոնք աշխատել են լրիվ ամբողջ մարտ ամիսը և նույն պաշտոնում ինչ պաշտոնում են գտնվում ցուցակագրման մոմենտին:

Յեթե հարցաքննվողը ընդունվել է աշխատանքի մարտի 1-ից հետո, կամ չի աշխատել մարտ ամսին լրիվ ամիսը (հիվանդության պատճառով և այլն), այդ կետերում գրվում է «չի աշխատել»: Յեթե ցուցակագրվողը աշխատել է մարտ ամսին վո: այն պաշտոնում, վորը վարում է հաշվառման մոմենտին, ապա այդ կետերում գրվում է «աշխատել է ուրիշ պաշտոնում» և այդ կետերը նույնպես չեն լրացվում:

Աշխատավարձը ցույց է տրվում ուրբլիներով. կուպեկները՝ մինչև 50-ը նկատի չեն առնվում, իսկ 50-ից ալելին հաշվվում է իբրեւ լրիվ ուրբլի:

29-րդ հարց. — «Աշխատել է տվյալ կազմակերպու-

Թյան մեջ 1935 թ. մարտ ամսում բանվորական որը լրիվ կամ մոտ լրիվ»:

Սույն հարցի պատասխանը (պատասխաններից մեկի ընդգծման միջոցով) տրվում է ամեն մի աշխատողի կողմից:

Այստեղ հիմնական նպատակն է հաշվի առնել համատեղողներին, այսինքն՝ տվյալ առևտրական ձեռնարկությունում կամ կազմակերպությունում վաճառքի բանվորական որ աշխատողներին (այսինքն ըստ պաշտանագրի որական պակաս ժամեր աշխատելու իրավունք ունեցողները քան սահմանված է տվյալ ձեռնարկության բոլոր աշխատողների համար. որինակ՝ ա) կոլտնտեսականներին, վորոնք աշխատում են գյուղկոոպում իբրև առևտրամթերային աշխատողներ համատեղությամբ և մոտ լրիվ բանվորական որ:

բ) գյուղկոոպի հաշվետարներին, վորոնք տանում են համատեղությամբ յերկու գյուղկոոպների հաշվետվությունը, կամ քաղկոպի հաշվապահներին և հաշվետարներին, վորոնք տանում են յերկու և ավելի խանութների հաշվետարությունը:

Այդ վերջին դեպքերում հաշվետարի համար լրացվում է մի քարտ-ըստ նրա հիմնական աշխատանքի վայրի:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ձև № 2 հարցաթերթիկը լրացնելու համար:

(Բլանկ քաղաքային խանութների և գյուղական ցանցից միայն չրջանային խանութների (չրջ. մագ.) և կուլտ. խանութների (կուլտ. մագ.) համար:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑԱՌՈՒՆՔՆԵՐ

1. ձև № 2 հարցաթերթիկով ցուցակագրվում են քաղաքներում, քաղաքատիպ վայրերում և բանվորական ավաններում գտնվող բոլոր մանրածախս առևտուր

կատարող խանութները, ապրանքները տուն հասցնող քաղաքները, և փայտի ու ածուխի մանրածախս առևտուր կատարող պահեստները:

Ձև № 2 հարցաթերթիկով ցուցակագրվում են նաև բոլոր չրջանային ունիվերսալ (ուսյմագ) և կուլտ խանութները (կուլտմագ) թե քաղաքներում ու քաղաքատիպ վայրերում և թե գյուղերում:

2. Ցուցակագրման յենթակա յեն մանրածախս առևտուր կատարող առևտրական ձեռնարկությունները, վորոնք գործում են ցուցակագրության կրիտիկական մոմենտին, այսինքն՝ 1935 թ. ապրիլի 15-ին:

Ծանոթություն 1.— Ապրանքների հաշվառման պատճառով փակված ձեռնարկությունները համարվում են գործող և յենթակա յեն հաշվառման:

2. Վերանորոգման և այլ պատճառներով 15 որից մոտ ավել ժամանակով փակված ձեռնարկությունները համարվում են գործող և յենթակա յեն ցուցակագրման: Վերջիններիս մասին բոլոր տեղեկությունները պետք է վերցնել այն առևտրական կազմակերպություններից, վորին նրանք պատկանում են: Հարցաթերթիկի վրա գրել «փակված է ժամանակավորապես»:

3. Ցուցակագրությանը յենթակա չեն

ա) Շրջիկ մանրածախս ցանցը (սայլեր, սայլակներ, լատոկներ և այլն):

բ) ցուցակագրման մոմենտին յուծարքի յենթարկված առևտրական ձեռնարկությունները, յեթե նույնիսկ նրանք գործել են 1935 թվի ապրիլի 1-ին և մեկ են ցուցակագրության յենթակա ձեռնարկությունների նախնական ցուցակի մեջ:

գ) հասարակական սննդի ձեռնարկությունները (ռեստորանները, ճաշարաններ, կաֆե, թեյարաններ, քարեջրատներ և այլն):

դ) շուկաներում (քաղաքներում) կոլտնտեսական

ների, մենատնտեսների և մասնավոր անձանց կողմից սայլերի և ձեռքի վրա կատարվող առևտուրը:

յե) այն պետական և տնայնագործական արհեստանոցների առևտուրը, վորոնց հիմնական գործունեությունը հանդիսանում է արտագրությունը և տնային իրերի վերանորոգումը:

4. «Մասնավոր» այսպիսի նշան դրվում է բլանկի վրա, յեթե այդպիսին լրացված է մասնավոր կազմակերպության կամ մասնավոր անձանց պատկանող առևտրական ձեռնարկության համար:

2. Բազատություններ բլանկի առանձին հարցերի վերաբերյալ

Հարցեր 1 և 2. Գրել հանրապետության և շրջանի անունը:

Բացի այդ անհրաժեշտ է գրել քաղաքի և փողոցի անունը, տան №-ը և հեռախոսի №-ը:

Գյուղերում գտնվող շրջխանութները (ուսյոնիվերմազ) և կուլտխանութների համար կազմված հարցաթերթիկներում անհրաժեշտ է գրել գյուղխորհրդի և գյուղի անունը:

Հարց 3. Լրացվում է միմիայն Յերեանում:

Հարց 4. «Խանութի անունը» այս կետում գրել խանութի լրիվ անունը, ցույց տալով №-ը, յեթե այդպիսին կրում է խանութը: Խանութի անունը պետք է անպայման համապատասխանի նույն խանութի կադրերի (անձնակազմի) համար կազմած ձև № 1 հարցաթերթիկում ցույց տված անունին (տես № 1 ձևի հրահանգը):

Հարց 5. «Առևտրական կազմակերպության անունը, վորին պատկանում է խանութը»: Այս կետում պետք է ցույց տալ առևտրական կազմակերպության լրիվ անունը, վորին անմիջապես յենթարկվում է տվյալ խանութը (որինակ՝ Լենինականի քաղաքային սպառողական կոոպերացիա, «Հայաս» և այլն, Արթիկի շրջպատո-

կոոպերություն, Որթաքիլիսայի գյուղկոոպ, Ալլահ-վերդու ՈՐՄ և այլն):

Հարց 6. «Կատարվել է արդյո՞ք մարտ ամսում նորմավորված մատակարարման կցումները»: Խանութին: «Այո» պատասխան տրվում է բոլոր դեպքերում յեթե 1935 թ. մարտ ամսում տեղի է ունեցել նորմավորված մատակարարում, անկախ նրանից հանդիսանում է արդյո՞ք տվյալ խանութը փակ բաշխիչ և նրան կցվում է վորոշ ձևնարկությունների անձնակազմը, թե բաց խանութ և կցումները տեղի յե ունեցել առանց սահմանափակման— ամբողջ ազգաբնակչությանը:

Հարց 7. «Նորմավորված մատակարարման կցվածների թիվը մարտ ամսում»: Ցույց է տրվում մարտ ամսում կցած բոլոր սերիաների գրքույկների ընդհանուր թիվը:

Հարց 8. «Վարտեղ է գտնվում խանութը»: Յեթե խանութը գտնվում է յերկաթգծի կայարանում և նրա հիմնական խնդիրն է սպասարկել յերկաթգծի ճանապարհորդներին, ապա ընդգծել «յերկաթգծի կայարանում»: Ընդգծել՝ «նավահանգստում»— յեթե խանութը գտնվում է նավահանգստում և գլխավորապես սպասարկում է ճանապարհորդներին, «չուկայում»— յեթե գտնվում է չուկայում և սպասարկում է գլխավորապես չուկայի առևտրին մասնակցողներին:

«Փարբիկա-գործարանային տերրիտորիայում», յեթե խանութը գտնվում է գործարանի, հանքերի, Փարբիկայի տերրիտորիայի վրա և հիմնականում սպասարկում է գործարանի, հանքերի կամ Փարբիկայի բնակչությանը:

Բոլոր մյուս խանութների համար ընդգծվում է «այլ տեղում»:

Հարց 9. «Խանութի մասնագիտացումը»:

ա) «Մթերային մասնագիտացված» ընդգծել այն դեպքում, յերբ խանութում տեղի յե ունենում մեկ տեսակ մթերքի վաճառք, որինակ կաթնամթերքի, մսի, հացի, մրգեղենի, բանջարեղենի և այլն:

բ) «մթերային խառն» — յեթե խանութում վաճառում են զանազան մթերային ապրանքներ, չառանձնացնելով և առավելություն չտալով մի վորեւ տեսակի ապրանքի:

գ) վոչ մթերային մասնագիտացված — յեթե խանութում վաճառվում է գլխավորապես մեկ տեսակի վոչ մթերային ապրանք որինակ՝ կաշվեղեն-կոշիկեղենի, պատրաստի հագուստեղենի, գրքերի, ծխախոտի, մանեղենի և այլն:

դ) «վոչ մթերային խառն» — յեթե խանութում վաճառվում են զանազան տեսակի վոչ մթերային ապրանքներ, չառանձնացնելով և առավելություն չտալով մի վորեւ ապրանքի:

յե) «խառն» ընդգծել այն դեպքում յեթե խանութում վաճառվում է և մթերային և վոչ մթերային ապրանքներ:

Ծանոթություն. — 1) Ունիվերսալ խանութները պետք է դասել կամ «վոչ մթերային խառն», կամ «խառն» խանութների խմբին:

2) Առանձնապես առավելություն տված ապրանք վաճառող խանութ համարվում է այն դեպքում, յերբ այդ տեսակի ապրանքը խանութի շրջանառության մեջ կազմում է վոչ պակաս 75 0/0-ից:

3. Ապրանքի տեսակի տակ պետք է հասկանալ վաճառքի համար ի մի միավորված ապրանքների խումբը, վորի մեջ մտնող առանձին ապրանքները կամ արտադրված են նույնանման հումուլթից (կաշվեղեն-կոշիկների խանութներ, ռեզինից պատրաստած արտ. ապրանք վաճառող խանութներ և այլն) կամ, վորն ավելի հաճախ է պատահում, այն ապրանքային խումբը, վորը խմբավորում է այնպիսի ապրանքներ, վորոնք հանդիսանում են ըստ սպառողական պահանջի մեկը մյուսի լրացնողը, (որինակ՝ կոշիկները միացվում է կրկնակոշիկների, շնորոկների կոշիկ մագի և այլի հետ, պատրաստի հագուստեղենը գլխարկների, ճեր-

մակեղենի, մորթիների հետ, տրիկոտաժը, գալանտերիայի և այլի հետ): Նպարեղենի (բակալեյա) գաստրոնոմիայի խանութները հանդիսանում են իրրե մասնագիտացված մթերային խանութներ:

Հարց 10. «Առևտրի նյութը մասնագիտացված խնութների համար»: Այս հարցը լրացվում է այն խանութների համար, վորոնց հարցաթերթիկի 9-րդ հարցում ընդգծած է. «մթերային մասնագիտացված»: Անհրաժեշտ է ցույց տալ հիմնական տեսակի ապրանքը, վորը գերազանցորեն վաճառվում է խանութներում, որինակ, դաստրոնոմիա, բակալեյա, պատրաստի հագուստեղեն, մրգեղեն-բանջարեղեն և այլն:

Հարց 11. «Քանի ժամ է աշխատում խանութը չհաշված նաշամիջոցի ընդմիջումը»: Այստեղ պետք է ցույց տալ աշխատանքի ժամերի թիվը դուրս յեկած ճաշամիջոցի ընդմիջումը, համաձայն այն կարգի, վորը սահմանված է խանութի համար ցուցակագրության մոմենտին: Մյուս ընդմիջումները, բացի ճաշի համար, ապրանքի բացակայության կամ այլ պատճառներով, չդուրս գալ աշխատանքի ժամերի թվից:

Հարց 12. «Վոր քվին է կառուցված շենքը, ուր գտնվում է խանութը»: Այս կետում ցույց տալ այն շենքի կառուցման տարեթիվը վորտեղ գտնվում է խանութը, այլ վոչ թե խանութի կահավորման տարեթիվը:

Հարց 13. «Շենքի բնույթը» (1929 թ. հունվարի 1-ից հետո կառուցված խանութների համար): Այս կետը լրացվում է միայն այն խանութների համար, վորոնց մասին 12-րդ հարցում ընդգծած է վերջին յերկու տողերից մեկը:

Այս կետը նպատակ ունի պարզելու թե ինչ կերպ է առաջանում նոր առևտրական ֆոնդը (գույքը):

ա) խանութը կառուցվել է վորպես հատուկ առևտրական շենք:

բ) առևտրական շենքը կառուցվել է բնակելի կամ հիմնարկությունների շենքերում և

գ) առևտրական շենքերը հարմարեցրված են նախապես վոչ առևտրական նպատակների համար կառուցված շենքերում: Պատասխանը տրվում է համապատասխան տողի ընդգծման միջոցով, ըստ վորում հիմնարկությունների կամ դպրոցական շենքերում հատկապես առևտրի համար կառուցված խանութների նկատմամբ պետք է ընդգծել յերկրորդ տողը վորպես «առևտրական շենք բնակելի տան մեջ»:

Հարց 14. «Վոր հարկումն է խանութը»: Յեթե խանութը զբաղեցնում է մի քանի հարկ, ապա ընդգրծվում է մի քանի տող՝ որինակ «նկուղում» և «1 հարկում» (նկուղում ընդգծվում է այն դեպքում, յեթե այնտեղ է գտնվում առևտրական դահլիճը, վորտեղ տեղի է ունենում վաճառքը: Յեթե նկուղը ոգտադործվում է իբրեւ պահեստի շենք, ապա պատասխանը չի ընդգրծվում):

Հարցեր 18, 19, 20 և 21. «Շրջանառությունն ըստ վանառքի: Հունվար, փետրվար, մարտ ամիսներում և 1 յեռամսյակում»: Նախորոք հարկավոր է լրացնել 54 հարցը և ապա 54-րդ հարցի համապատասխան տողերի գումարները արտադրել սույն կետում:

Հարց 22. «Աշխատողների ընդհանուր թիվը առ 1/4—1935 թ.»: Նախապես անհրաժեշտ է լրացնել հարցաթերթիկի 55-րդ հարցը, ապա 55-րդ հարցի ընդհանուր գումարի տողում ստացված թիվը արտադրել սույն կետում:

Հարց 23.— 2ի լրացվում:

Հարց 24. «Ամբողջ պերսոնալի (անձնակազմի մարտ ամսվա աշխատավարձը»: Նախապես պետք է լրացնել 55-րդ հարցը, ապա ընդհանուր գումարի տողում ստացված թիվը փոխադրել սույն կետը:

Հարց 28. «Հովապահանցների կահավորումը: Հովապահանցների կահավորման անվան տակ պետք է հասկանալ հովապահ պահարաններ, արհեստական սա-

ռույց արտադրող—մեքենաները, սառեցնող վաննաներ (հալուզներ) և շուտ փչացող մթերքները սառցնելու ալլ տեսակի հատուկ կահավորումներ և սարքավորումներ:

Հարց 29. «Առևտրական դահլիճի տարածությունը: Յույց է տրվում խանութում յեղած տվյալների հիման վրա, կամ տեղումը չափելու միջոցով: Այստեղ պետք է ցույց տալ շենքի տարածությունը, վորտեղ ապառողին բաց է թողնվում ապրանքը: Չափելու ժամանակ պետք է վերցնել ամբողջ տարածությունը, թե այն վորտեղ լինում են գնողները և թե այն տարածությունը, վորը զբաղեցված է դրամարկղով, վաճառասեղաններով և վերջիններիս հետևում յեղած տարածությունը:

Հարց 30. «Շենքեր ապրանքների պահպանման համար»: Այստեղ պետք է ընդհանուր տարածությունը, վորը հավասար է լինելու 25, 26 և 27 հարցերում ցույց տված տարածությունների ընդհանուր գումարին: խանութին կից վոչ նկուղային տիպի պահեստների տարածությունը պետք է ցույց տալ 25-րդ հարցում:

Հարց 31. «Այլ ոժանդակ շենքերի տարածությունը»: Այս կետում պետք է ցույց տալ խանութին պատկանող մնացած շենքերի բոլոր տարածությունը, բացի այն տարածությունից, վորը ցույց է տված 29 և 30-րդ հարցերում: Այստեղ պետք է ցույց տալ ապրանքների ստացման և փաթեթներում, պարկերում տեղավորելու համար հատկացրած տարածությունը, զբաղեցրած տարածությունը, դիրեկտորի առանձնասենյակը, կարմիր անկյունի, ճաշարանի և ալլ շենքերի տարածությունները:

Հարց 33. «Իրամարկղներ ընդամենը» իբրեւ դրամարկղ պետք է հասկանալ խանութում հատուկ առանձնացրած աշխատակցի, վորը ստանում է դրամ գնորդներից: Յեթե դրամը ստացվում է նույն անձնավորության կողմից, վորը և բաց է թողնում ապրանքը, ապա պետք է գրել վոր դրամարկղ գոյություն չունի:

Հարց 34. «Այդ քվում մեքենայացված». Մեքենայացված դրամարկդի անվան տակ պետք է հասկանալ բոլոր տեսակի հատուկ ավտոմատ դրամարկդ—ապարատներ, վորոնք աշխատեցվում են ձեռքով կամ մեխանիկական ձևով:

Հարցեր 37—46. «Սպառողների սպասարկման վորակական ցուցանիշները»: «Ա» բաժնի 37—42 կետերը լրացվում է միմիայն պատրաստի հազուստեղենի և կոշիկեղենի մասնագիտացված խանութների համար, նույնպես և այն խանութների համար, վորոնք ունեն պատրաստի հազուստի և կոշիկեղենի բաժանմունքներ:

«Բ» բաժնի 43—46 կետերը լրացվում են մթերքներ վաճառող բոլոր խանութների համար: Այն դեպքում, յերբ խանութում կատարահեն սույն բաժիններում թված ցուցանիշները, ապա պետք է ընդգծել ամբողջ առդը, ընդգծել «կա» բառը և ազատ վանդակում գրել «1» որինակ յեթե պատրաստի հազուստեղենի խանութում կան սազացրանոցներ (պրիմերոշնայա) ապա պետք է ընդգծել «սազացրանոցներ» բառը, «կա» բառը և վերջինիս դիմացի ազատ վանդակում գրել «1»: Յեթե խանութում կան մի քանի հայելիներ, ապա միևնույն է՝ ազատ վանդակում նույնպես պետք է գրել «1»: Յեթե այս կամ այն ցուցանիշը խանութում բացակայում է ապա ընդգծվում է միմիայն «չկա» բառը: Պատրաստի հազուստեղեն և կոշիկեղեն չվաճառվող խանութների («Ա» բաժնի) կամ մթերքներ չվաճառող խանութների («Բ» բաժնի) համար այս բաժիններում վորչինչ չեն ընդգծում:

Հարցեր 47—50: Այս կետերում ցույց են տրվում առ 1/4—1935 թ. խանութին անմիջականորեն յենթակա կցված կրպակների և չրջիկ կետերի թիվը ու նրանց չրջանառության գումարը 1 յեռամսյակում:

Հարցեր 51—52 «Ապակենտրոնացված մթերումներ և գնումներ»: Ապակենտրոնացված մթերումների տակ պետք է հասկանալ խանութի կողմից անմիջականորեն արտադրողներից՝ կոյտնտեսություններից կոյտնտեսա-

կաններից, մենատնտեսներից գյուղատնտեսական մթերքների յնքնուրույն կերպով կատարած գնումները:

Ապակենտրոնացված գնումների տակ պետք է հասկանալ խանութի կողմից անմիջականորեն արտադրողներից— տնայնագործներից, տնայնագործական կոոպերացիայից և արդյունարքրական գործարաններից արդյունաբերական ապրանքների կատարած նույնպես յնքնուրույն գնումները, սակայն վորչ վերագաս կադմակերպության պլանի հաշվին:

51-րդ կետում պիտի նշել կատարում է արդյոք խանութը ապակենտրոնացված մթերումներ և գնումներ յեռմսյակում տեղի ունեցած՝ ապակենտրոնացված մթերումների և գնումների գումարը վաճառքի գներով:

Հարց 54. Այս կետում տեղեկություններն րատ խանութի առանձին բաժանմունքների (սեկցիաների) տրվում է այն դեպքում, յեթե բաժանմունքները ունեն յերենց արդժինպլանը և խանութում վաճառքի չրջանառության հաշվառումը տարվում է րատ առանձին բաժանմունքների:

Յեթե չրջանառության հաշվառումը խանութում չի տարվում րատ առանձին բաժանմունքների, ապա արդիսի խանութը համարվում է առանձին բաժանմունքներ չունեցող և տեղեկությունները տրվում են մեկ առդով ընդհանուր գումարով:

«Բաժանմունքների անունները» գրվում են ամեն մի բաժանմունքի լրիվ անունը (նպարեղենի, հացի, մանուֆակտուրայի, պատրաստի հազուստեղենի և այլն):

«Շրիթը»— Այս սյունյակը ցուցակադրության ժամանակ չի լրացվում:

«Գործակատարների թիվը առ 1/4— 1935 թ., ցույց տալ գործակատարների թիվը, վորոնք կցված են ամեն մի առանձին բաժանմունքին առ 1/4—1935 թ.: Ամբողջ խանութի գործակատարների թիվը պետք է հավասար յինի հարցաթերթիկի 55-րդ հարցում ցույց տված առ 1/4 գործակատարների թվին:

Բեռնավորման միավորներ առ 1/4 ցուցակագրման ժամանակ չի լրացվում, այլ այդպիսին լրացվում է ԺՏՎՀ-ի տեսչի կողմից, վորոնց համար ցուցմունքները տրվում են առանձին: (Տես հրահանգի վերջում բերված լրացումը):

«Վանառասեղանների յերկարությունը մետրներով» պարզվում է ամեն մի բաժնի վաճառասեղանների յերկարությունն անմիջականորեն չափելու միջոցով: Թիվը գրվում է մեկ տասնյերրորդական նշանի ճշտությամբ (որինակ 2. 1 մետր, 1. 8 մետր և այլն):

«Շրջանառությունը ըստ վանառքի»: Շրջանառությունը պետք է ցույց տալ ուղբյիններով (առանց կուպեկների):

Շրջանառության մեջ չպետք է մտցնել միևնույն տուևտրական կազմակերպության մեկ խանութից մյուս խանութը ապրանքների ներքին փոխադրությունները նույնպես և ապրանքի վերադարձնելը մատակարարներին: խանութին կցված կրպակների կամ չրջիկ կետերի միջոցով կատարած աուևտրի շրջանառությունը նույնպես այս կետում չպետք է մտցնել: Նրանց շրջանառությունը ցույց է տրված սույն բլանկի 48 և 50 կետերում: Հունվար, փետրվար և մարտ ամիսների շրջանառության գումարներն անպայման պետք է հավասար լինի 1-ին յեռամսյակի գումարին: Շրջանառության գումարի տվյալները պետք է անպայման համապատասխանեն սույն բլանկի 18, 19, 20 և 21 հարցերի տվյալներին:

Հարց 55. «Խանութի աշխատողների թիվը առ 1/4— 1935 թ. և ցուցակագրման մոմենտին ու նրանց աշխատավարձը մարտ ամսում»: Այս կետերում ցուցմունքները պետք է տալ ըստ աշխատողների առանձին կատեգորիաների: «Հաշվային աշխատողներ»-ի թվին պետք է դասել հաշվապահներին, հաշվետարներին, վիճակագիրներին և այլն:

«Կրտսեր սպասարկու կազմի» թվին՝ ցրիչներ, հավաքարարներ և այլն: Մնացած բոլոր աշխատողները,

վորոնք չեն մատնանշված սույն հարցում իբրև առանձին կատեգորիայի աշխատողներ ցույց են տրվում «այլ աշխատողներ»-ի տողում (գրասենյակային աշխատողներ, գործակալներ, պահեստներում աշխատողներ, փոխադրողներ և այլն):

«Շնորհամենք աշխատողներ» տողում ցույց տված թիվը պետք է անպայման հավասար լինի առանձին կատեգորիաների աշխատողների թվի գումարին:

«Աշխատողների թիվը» առ 1/4— 1935 թ. ցույց է տրվում մշտական և ժամանակավոր (15 որից վոչ պակաս) աշխատողներին, վորոնք աշխատել են խանութում 1935 թ. ապրիլի 1-ին:

Այս թվում չպետք է ցույց տալ այն աշխատողներին, վորոնք հրավիրված են հատուկ աշխատանքներ կատարելու համար և չեն անցնում խանութի աշխատողների ցուցակով (չենքի վերանորոգման, բանջարեղենի մաքրման և այլ նման աշխատանքների համար):

«Աշխատողների թիվը ցուցակագրման մոմենտին»: Այստեղ ցույց տալ նույն կատեգորիայի աշխատողներին, վորոնք հաշվի յեն առնված սույն հարցում 1935 թ., 1/4, սակայն ցուցակագրման մոմենտի յեղած թիվը: Այս ցուցմունքը ունի ստուգողական նշանակություն, վորպեսզի ստուգել № 1 ձևով ցուցակագրությամբ ընդգրկված խանութում աշխատողների լրիվ թիվը: Իբրև կանոն ցուցակագրման մոմենտին «ընդամենը աշխատողներ, տողում» ցույց տված աշխատողների թիվը պետք է հավասար լինի հարցաթերթիկի 61-րդ հարցի պատասխանին— «խանութում լրացրած № 1 ձևի բլանկների քանակը»: Յեթե այդ թվերը տարբերվում են, ապա առանձին թղթի վրա, իբրև կցորդ հարցաթերթիկին, պետք է գրել տարբերության պատճառը:

«Մարտ ամսի աշխատավարձը»: Տեղեկությունները պետք է վերցնել մարտ ամսվա աշխատավարձի ուճակացուցակի տվյալներից, վորտեղից վերցնել համաձայն սահմանված դրույքների (կամ ուղղակի հատավարձա-

յին գնահատումների) հաշվարկած աշխատավարձը, ներառյալ բոլոր գանձումները և պահումները (հարկեր, փոխառություն, պահումներ ըստ կատարողական թերթերի և այլն), հաշված նաև պրեմիաները (պարգևատրումները), վորոնք հանդիսանում են աշխատավարձի մասը (ապրանքաչրջանառության պլանները կատարելու և գերակատարելու համար, յերկար տարիներ աշխատելու համար և այլն) :

Միանվագ պարգևատրումները աշխատավարձի մեջ չեն մտնում, չեն մտնում նաև աշխատավարձի վրայելը (սոցապի և տեղկոմական տոկոսները և այլն) և բանութի հետ կապված ծախսերը: Աշխատավարձի ընդհանուր գումարը պետք է հավասար լինի 24-րդ հարցի գումարին:

Հարց 56. «Խանութի ծախսերը 1 յեռամսյակում»: Այս կետը լրացվում է այն խանութների համար, վորոնք փոխադրված են ինքնուրույն բալանսի, հաշվապահական տվյալների հիման վրա չրջանառության ծախսերի հաշիվներին:

Հոդ. 1. «Տրանսպորտային ծախսեր (ապրանքները խանութ հասցնելու համար) այստեղ մտնում են այն ծախսերը, վորոնք կապված են ապրանքները բոլոր տեսակի փոխադրական միջոցներով (յերկաթուղով, ջրով, ավտոյով, սայլերով և այլն) խանութ փոխադրելու հետ, վորպիսի ծախսերը կատարվում է անմիջականորեն խանութի կողմից, կամ վճարվում է առևտրական կազմակերպության կողմից ի հաշիվ խանութի և հետագայում մոցվում է խանութի ծախսերի հաշիվ մեջ:

Հոդ. 2. «Աշխատավարձ»: Յույց է տրվում խանութի բոլոր աշխատակիցների աշխատավարձը, ներառյալ և նրանց, վորոնք չեն մտնում ցուցակներում (որինակ՝ բանջարեղենի մաքրման համար, չենքի վերանորոգման և այլնի համար հրավիրված):

Հոդ. 3. «Աշխատավարձի վրայելը»: Յույց է տրվում աշխատավարձի բոլոր վրայելները, և բանութի

հետ կապված բոլոր լրացուցիչ ծախսերը (մասնագիտական հագուստի, աշխատանքի պաշտպանության ծախսերը, աշխատակիցների տեղափոխությունների հետ կապված և այլ ծախսերը):

Հոդ. 4. «Շենքի վարձը»: Յույց տալ խանութի գրադեցրած և գույքի վարձագինը (արենդա) 1-ին յեռամսյակի համար, այն դեպքում յեթե չենք կամ գույքը վերցրած է վարձով:

Հոդ. 5. «Շենքի պահպանման ծախսեր»: Այստեղ պետք է մտցնել չենքը տաքացնելու, լուսավորության, չենքի և բակի մաքրելու, չենքի և գույքի ընթացիկ վերանորոգման ծախսերը, կոմունալ սպասարկման (ջրմուղ, կոյուղի) հեռախոսների, խանութի փորինանների սարքելու և ձևավորելու և այլ ծախսերը, վորոնք կապված են չենքը մաքուր և կանոնավոր պահելու հետ:

Վարձով վերցրած չենքի վրա կատարած հիմնական վերանորոգման ծախսերը, վորոնք չեն նախատեսված վարձակալության պայմանագրով և խանութի կողմից մաս-մաս անց է կացրած չրջանառության ծախսերի մեջ նույնպես ցույց է տրվում սույն հոդվածում:

Հոդ. 6. «Շենքերի և գույքի ամորտիզացիան»: Այս հոդվածում ցույց է տրվում 1-ին յեռամսյակի սեփական գույքի ամորտիզացիոն հատկացումները:

Հոդ. 7. «Ապրանքների կորուստ, վորպիսին տեղի չե ունենում պահպանման և վաճառքի ընթացքում»: Այստեղ են մտնում թե այն կորուստները, վորոնք գուրս են գրած իբրև բնական պակասորդ համաձայն բնդունված նորմաների, և թե այն պակասորդները, վորոնք բնդունված են խանութի կողմից իր հաշիվն ըստ արձանագրությունների, (վորոնք չեն դրված հանցավոր անձի հաշիվին):

Ծանադարհում յեղած ապրանքների պակասորդները այստեղ չեն մտնում:

Հոդ. 8. «Այլ ծախսեր»: Այստեղ գրանցել բոլոր այլ ծախսերը, վորոնք մտնում են չրջանառության

ծախսերի մեջ (գրասենյակային, փոստ-հեռագրական, տարայի փաթեթման (ուպոկոպտոնին) նյութերի, ծախսերը, վարկային ծախսերը, ապրանքների պահպանման համար ուրիշի ապարատին վճարված ծախսերը և այլն: Այստեղ չեն մտնում խանութի հարկերը և տուրքերը և վերադաս մարմիններին հատկացումները յեթե մինչև անգամ տվյալ խանութի հաշվառման սխեմայով այդպիսիներն անց են կացված շրջանառության ծախսերում:

Հոդ. 9. «Ընդամենը ծախսեր»: Անպայման պետք է համաձայն լինի վերևում թված 8 հոդվածների խանութի ծախսերի գումարին: Այս բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել վորպեսզի ցույց տրվեն իրոք 1-ին յեռամսյակին վերաբերվող խանութի ծախսերը, այլ վոչ թե 1-ին յեռամսյակում կատարած ծախսերը: Որինակ 1-ին յեռամսյակում կարող է վճարված լինել չենքերի վարձը, կամ հեռախոսի ոգտագործման վճարը ամբողջ 1935 թվի համար: Այս ծախսերը այս բաժնում չպետք է ցույց տրվեն ամբողջ փաստացի վճարվածի չափով, այլ միայն այն մասով, վորը ընկնում է 1-ին յեռամսյակին, նույնպես կարող է պատահել, վոր 1-ին յեռամսյակում կատարված են 1934 թվի ծախսերը, — այդ ծախսերը 1-ին յեռամսյակի ծախսերում և հետևաբար այս բաժնում չպետք է ցույց տրվեն:

Մյուս կողմից կարող է պատահել, վոր 1-ին յեռամսյակում կատարած ծախսերի գործողությունների հետ կապված ծախսերը 1-ին յեռամսյակում չեն վճարված — այդ դեպքում այդ գործողությունների վճարումները պետք է մտցնել 1-ին յեռամսյակի ծախսերի մեջ հաշվապահության կատարած հաշվարկումների միջոցով:

Հարց 57. «Հայտնաբերած է վատնումներ և յուրացումներ 1-ին յեռամսյակում»: Լրացվում է խանութներում վատնումների և յուրացումների վերաբերյալ կազմած արձանագրությունների համաձայն: Հաշվում

են 1-ին յեռամսյակում տեղի ունեցած յուրացումները և վատնումները (դրամի և ապրանքի դեպքերի թիվը և ինչ գումարի և կատարված վատնումներ և յուրացումներ*):

Հարց 58—59. «Խանութի աշխատանքի արդյունքները 1-ին յեռամսյակում»: Լրացնում են այն խանութները, վորոնք փոխադրված են ինքնուրույն բալանսի, առ 1/4—35 թվի հաշվեկշռի տվյալների:

Հարց 60. «Ներքևում բերված ցուցակից, վոր ապրանքներով է կատարվել առևտուրը 1935 թ. 1-ին յեռամսյակում»: Այս հարցն ունի խոշոր նշանակություն այս կամ այն տեսակի ապրանքներ վաճառող առևտրական կետերի թիվը հայտնաբերելու համար: Այս կետում թված 26 տեսակի ապրանքներից անհրաժեշտ է ընդգծել այն ապրանքները, վորոնք շարունակաբար (այլ վոչ թե պատահամբ) վաճառվել են խանութում 1935 թ. 1-ին յեռամսյակում և ընդգծածի դեմ գրել «1»:

Հարց 61. «Խանութում լրացրած № 1 ձևի ֆարտերի փանակը»: Այստեղ ցույց է տրվում ցուցակագրության ժամանակ խանութում աշխատող անձնակազմի համար լրացրած № 1 քարտերի քանակը, վորը վորպես կանոն պետք է համաձայն լինի ցուցակագրության մոմենտին խանութում յեղած աշխատողների թվին (կետ 55):

Լ Ր Ա Ց Ո Ւ Մ

Ձև № 2-ի հարց 54-ի «բեռնավորման միավորներ» առ 1/4 սյունյակի լրացնելու կարգի մասի.

Այս սյունյակը հաշվառման ժամանակ չի լրացվում, այլ լրացվում է ԺՏՀՎ տեսչի կողմից նյութերը ցուցակագրողներից ընդունելուց հետո:

Բեռնավորման միավորների թիվը սահմանվում է հետևյալ կերպ. առ 1/4—35 թ. յեղած գործակատար-

*) Բացի առաջին յեռամսյակում հայտնաբերված յուրացումներից այստեղ պետք է հաշվի առնել նաև յեռամսյակի ընթացքում պակասորդներից վորպես վատնումներ և յուրացումներ փոխանցված գումարները, թեկուզ պակասորդը հայտնաբերված լինի 1934 թ. ընթացքում:

ների թվին, վորոնցից յուրաքանչյուրը համարվում է վորպես լրիվ բեռնավորման միավոր, ավելացվում է խանութների վարիչների, նրանց տեղեկանքների, խանութների առանձին բաժանմունքների վարիչների և նրանց տեղակալների թիվն այն մասով, վոր մասով նրանք փաստորեն աշխատում են վաճառատեղանի մոտ սպառողին սպրանք բաց թողնելով:

Տվյալները վերցվում են ձև 1 բլանկի 25-րդ հարցից:

Յեթե խանութի վարիչը ցույց է տվել, վոր նա աշխատում է վաճառատեղանի մոտ որվա $\frac{1}{4}$ -ը, նա հաշվում է վորպես $\frac{1}{4}$ բեռնավորման միավոր:

Որինակներ. 1-ին որինակ— խանութում կա 3 գործակառար, 1 վարիչ, վորը աշխատում է վաճառատեղանի մոտ բանվորական որվա $\frac{1}{4}$ -ը և նրա տեղակալը վորը աշխատում է վաճառատեղանի մոտ բանվորական որվա $\frac{3}{4}$ -ը: Ընդամենը բեռնավորման միավորներ կլինին $3 + \frac{1}{4} + \frac{3}{4} = 4$ բեռնավորման միավորի:

Յերկրորդ որինակ՝ խանութում կա 4 գործակառար, խանութի վարիչ, վորը վաճառատեղանի մոտ չի աշխատում, խանութի վարիչի տեղակալ, վորն աշխատում է վաճառատեղանի մոտ բանվորական որվա $\frac{1}{3}$ և խանութի մսի բաժանմունքի վարիչ, վորը աշխատում է վաճառատեղանի մոտ բանվորական որվա $\frac{3}{4}$: Ընդամենը բեռնավորման միավորներ կլինին $4 + \frac{1}{3} + \frac{3}{4} = 5\frac{1}{4}$ կամ 5,25 բեռնավորման միավորի:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Ձեվ № 3 ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԸ ԼՐԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Ընդհանուր ցուցմունքներ

1. Ձև № 3 հարցաթերթիկով ցուցակագրվում են գյուղական վայրերում գտնվող բոլոր մանրածախս առևտուր կատարող խանութներն ու փայտի, ածուխի պահեստները, բացառությամբ չրջանային խանութներից (սալմազների) կուլտխանութներից, վորոնք ցուցակագրվում են ձև № 2 հարցաթերթիկով:

2. Ցուցակագրության յենթակա յեն առ 15 ապրիլի 1935 թ. գործող մանրածախս բոլոր առևտրական ձեռնարկությունները:

Ծանոթություն 1.— Ապրանքների հաշվառման սլաճառով փակված ձեռնարկությունները համարվում են գործող և յենթակա յեն հաշվառման:

2. Վերանորոգման և այլ սլաճառներով 15 որից վոչ ավել ժամանակով փակված ձեռնարկությունները համարվում են գործող և յենթակա յեն ցուցակագրության, վերջիններիս մասին բոլոր տեղեկությունները պետք է վերցնել այն առևտրական կազմակերպություններից, վորին նրանք պատկանում են: Հարցաթերթերի վրա գրել «փակված է ժամանակավորապես»:

3. Ցուցակագրության յենթակա չեն՝

ա) Շրջիկ մանրածախս ցանցը (սայլեր, սայլակներ, լատոկներ և այլն):

բ) ցուցակագրման մոմենտին լուծարքի յենթարկված առևտրական ձեռնարկությունները յեթե նույնիսկ նրանք գործել են 1935 թ. ապրիլի 1-ին և մտել են ցուցակագրության յենթակա ձեռնարկությունների նախնական ցուցակի մեջ:

գ) հատարական սննդի ձեռնարկությունները (ոեստորաններ, ճաշարաններ, կաֆե, թեյարաններ, դորեջրատներ և այլն):

դ) չուկաներում (բազարներում), կուլտեսականների, մենատնտեսների և մասնավոր անձանց կողմից սայլերի և ձեռքի վրա կատարվող առևտուրը:

յե) այն պետական և տնայնագործական արհեստանոցների առևտուրը, վորոնց հիմնական գործունեյությունը հանդիսանում է արտադրությունը և տնային իրերի վերանորոգումը:

4. «Մասնավոր»— այսպիսի նշան է դրվում հարցաթերթիկի վրա, յեթե վերջինս լրացրած է մասնավոր կազմակերպության կամ մասնավոր անձանց պատկանող առևտրական ձեռնարկության համար:

2. Բացատրություններ բլանկի առանձին հարցերի մասին

Հարցեր 1 և 2. Գրել հանրապետության և շրջանի անունը: Բացի այդ անհրաժեշտ է ցույց տալ գյուղ-խորհրդի և գյուղի անունը:

Հարց 3. «Խանութի անունը» — այս կետում գրել խանութի լրիվ անունը: Խանութի անունը պետք է անպայման համապատասխանի նույն խանութի անունին:

Հարց 4. «Առևտրական կազմակերպության անունը, վորին պատկանում է խանութը»: Այս կետում ցույց տալ առևտրական կազմակերպության լրիվ անունը, վորին անմիջապես յենթարկվում է տվյալ խանութը (որինակ՝ Լենինականի շրջանի գյուղատնտեսական, «Հայաս» «Հաշմկոտպիութուն» և այլն):

Հարց 5. «Կատարվել է արդյոք մարտ ամսին նոր-մափորված մատակարարման կցումներ խանութին»:

«Կատարվել է» պատասխան տրվում է այն դեպքերում, յեթե 1935 թվի մարտին տեղի յե ունեցել նոր-մափորված մատակարարում, անկախ նրանից հանդի-սանում է արդյոք տվյալ խանութը փակ բաշխիչ և նրան կցվում են վորոշ ձեռնարկությունների անձնակազմը թե բաց խանութ է և կցումները տեղի է ունեցել առանց սահմանափակման — ամբողջ ազգարնակության:

Հարց 7. «Ինչ տիպի վայրում է գտնվում խանութը»: Անհրաժեշտ է ընդգծել հետևյալ հարցերից մեկը՝ «Շուկա ունեցող գյուղում», այն դեպքում, յեթե գյուղում չարունակաբար տեղի են ունենում չուկաներ (բազարներ): «Սովխոգում» յեթե գյուղական խանութ-ները գտնվում են խորհրդային տնտեսությունում «Ար-դյունաբերական ձեռնարկության կից»: Յեթե խանութը գտնվում է արդյունաբերական ձեռնարկությանը (գործարանի, ֆաբրիկայի, հանքերի) կից գյուղական վայրում: Մնացած այլ դեպքերում ընդգծել «Այլ գյուղական վայրերում» տողը:

Հարց 8. «Խանութի մասնագիտացումը»: Մթերա-յին խանութներին պետք է դասել այն խանութները,

վորտեղ տեղի յե ունենում դանազան մթերքների վաճա-ռում: Յեթե խանութը վաճառում է միայն մի վորևե տեսակի մթերք (կաթնամթերք, միս, պտուղներ, բան-ջարեղեն և այլն), ապա այդ դեպքում ևս նրան պետք է դասել մթերային ապրանքներ վաճառող խանութների շարքում:

Վոչ մթերային խանութներ պետք է համարել այն խանութները, վորտեղ տեղի է ունենում արդյունաբե-րական ապրանքների վաճառք: Այն խանութներում, վորտեղ վաճառվում են մթերային և վոչ մթերային ապրանքներ, այդպիսիները պետք է դասել «խառն» խանութների շարքին:

Հարց 9. «Բանի ժամ է աշխատում խանութը, չը-հաշված հաշամիջոցի ընդմիջումը»: Այստեղ պետք է ցույց տալ աշխատանքի ժամերի թիվը դուրս յեկած ճաշամիջոցի ընդմիջումը, համաձայն այն կարգի, վոր սահմանված է խանութի համար ցուցակադրության մոմենտին: Մյուս ընդմիջումները, բացի ճաշի համար (ապրանքի բացակայության կամ այլ պատճառներով), չդուրս գալ խանութի աշխատանքի ժամերի թվից:

Հարց 10. «Գտնվում է արդյոք խանութը յերկաթ-գծի կայարանին կամ նավահանգստին կից»: «Այո» պա-տասխանը ընդգծվում է այն դեպքում, յեթե խանութը գտնվում է յերկաթուղային կայարան կամ նավահան-գիստ ունեցող գյուղում:

Հարց 11. «Հեռավորությունը մինչև մոտակա յեր-կաթուղային կայարանը կամ նավահանգիստը»: Պետք է ցույց տալ հեռավորությունը գյուղից մինչև այն յերկաթուղային կայարանը, կամ նավահանգիստը, վորտեղից գլխավորապես տվյալ խանութի համար կա-տարվում է ապրանքների մատակարարումը: Հեռավո-րությունը ցույց տալ կիլոմետրներով: Այս հարցին պատասխանում են բոլոր այն առևտրական ձեռնարկու-թյունները, վորոնք 10-րդ հարցում տվել են բացասա-կան պատասխան:

Հարց 12. «Բնակավայրերի թիվը, վորոնց սպա-

ապրիլում է խանութը»: Այս կետում պետք է ցույց տալ առևտրական ձեռնարկություն չունեցող գյուղերի թիվը, վորոնք գլխավորապես սպասարկվում են տվյալ խանութի կողմից: Այն գյուղը, վորտեղ գտնվում է ցուցակադրվող խանութը նույնպես պետք է հաշվել սպասարկվող գյուղերի թվում:

Հարց 13. «Հեռավորությունը մինչ ամենահեռավոր սպասարկվող բնակավայրը»: Այս հարցը լրացվում է այն դեպքում, յետ 12-րդ հարցում ցույց է տված, վոր խանութը սպասարկում է 2 կամ ավելի գյուղեր: Հեռավորությունը պետք է ցույց տալ խանութից մինչև ամենահեռավոր սպասարկվող բնակավայրը (կիրոմետրներով):

Հարց 16. «Շենքի կառուցման տարեթիվը, ուր գտնվում է խանութը»: Այս կետում պետք է ցույց տալ շենքի կառուցման տարեթիվը (վորտեղ գտնվում է խանութը), այլ վոչ թե խանութի կահավորման տարեթիվը:

Հարց 17. «Շենքի բնույթը» (1929 թվի հունվարի 1-ից հետո կառուցված խանութների համար): Այս կետը լրացվում է միայն այն խանութների համար, վորոնց մասին 16-րդ հարցում ընդգծված է վերջին յերկու տույներից մեկը:

Այս կետում պետք է տալ հետևյալ պատասխանը.
ա) խանութը կառուցված է վորպես հատուկ առևտրական շենք.

բ) առևտրական շենքը կառուցված է բնակելի կամ հիմնարկությունների շենքերում.

գ) առևտրական շենքերը հարմարեցված են նախապես վոչ առևտրական նպատակների համար կառուցված շենքերից:

Պատասխանը տրվում է համապատասխան տողի ընդգծման միջոցով:

Հարցեր 20, 21, 22 և 23. «Մանրավաճառ առևտրի շրջանառությունը ըստ վաճառքի»: Շրջանառությունը պետք է ցույց տալ ուղղիներով (առանց կոպեկների):

Շրջանառության մեջ չպետք է մտցնել միևնույն առեվտրական կազմակերպության մեկ խանութից մյուս խանութը ապրանքների կատարած ներքին փոխադրությունները, նույնպես և ապրանքի վերադարձնելը մատակարարներին: Խանութին կցված կրպակներ կամ չրջիկ միավորների միջոցով կատարած շրջանառությունը, այս կետում չպետք է մտցնել: Հունվար, փետրվար և մարտ ամիսների շրջանառությունների գումարը անպայման պետք է հավասար լինի 1 յեռամսյակի շրջանառության գումարին:

Հարցեր 24 և 25. «Հայտնաբերված է յուրացումներ և վատնումներ 1-ին յեռամսյակում»: Տեղեկությունները տրվում են խանութում յուրացումների և վատնումների համար կազմված արաճանագրությունների հիման վրա. 24-րդ կետում ցույց է տրվում վատնումների և յուրացումների (զրամի կամ ապրանքի դեպքերի թիվը 1935 թվի 1-ին յեռամսյակում, իսկ 25-րդ կետում կատարած վատնումների և յուրացումների գումարը ուղղիներով:

Հարց 26. Առևտրական դահլիճի տարածությունը ցույց է տրվում ըստ խանութում յեղած տվյալների, կամ տեղում չափելու միջոցով: Պետք է ցույց տալ շենքի տարածությունը, վորտեղ սպասողին ապրանք է բաց թողնվում: Չափելու ժամանակ պետք է վերցնել ամբողջ տարածությունը, թե այն վորտեղ լինում են գնողները և թե այն տարածությունը, վորը զբաղեցրած է դրամարկղով, վաճառասեղաններով (պրիլավկի) և վաճառասեղանների հետևում յեղած տարածությունը:

Հարց 27. «Ոժանդակ շենքերի տարածությունը»: Այս կետում ցույց է տրվում խանութին կից թե ապրանքներ պահելու շենքերի տարածությունը (պահեստներ, մառան, նկուղներ, սառցատուն) և թե այլ ոժանդակ շենքերը (զբանենյակ, ապրանքներ ընդունելու հատուկ շենքեր և այլն):

Հարց 28. «Ընդամենը տարածություն»: Պետք է հավասար լինի 20 և 27 հարցերի պատասխանների գումարին:

Հարց 33. «Վանառասեղանների յերկարությունը մետրներով»: Այս կետը լրացնում են խանութում յեղած բոլոր վաճառասեղանների յերկարությունը անմիջականորեն չափելու միջոցով: Թիվը գրվում է մեկ տասերորդական ճշտությամբ (որինակ՝ 2,1 մետր կամ 8,5 մետր և այլն):

Հարց 34. «Իրամարկներ»: Իբրև դրամարկի պետք է հասկանալ խանութում հատուկ առանձնացրած աշխատակցին, վորը ստանում է դրամը դնորդներից: Յեթե դրամը ստացվում է նույն անձնավորության կողմից, վորը և բաց է թողնում ապրանքը, ապա պետք է դրել, վոր դրամարկի գոյություն չունի:

Հարց 36. «Մեքենայացված դրամարկ»-ի անվան առի պետք է հասկանալ բոլոր տեսակի հատուկ ավտոմատ դրամարկի ապարատները, վորոնք աշխատեցվում են ձեռքով կամ մեխանիկական ձևով:

Հարց 41—50. «Խանութի աշխատողների քիվը առ 1/4—1935 թ., ցուցակագրման մոմենտին ու նրանց աշխատավարձը մարտ ամսում: Այս կետում տեղեկությունները պետք է ցույց տալ ըստ աշխատողների առանձին կատեգորիաների «հաշվային աշխատակիցների» թվին պետք է դասել հաշվապահներին, հաշվետարներին, վիճակագիրներին և այլն: Կրտսեր սպասարկության անձնակազմի» — թվին — ցրիչները, հավաքարարները և այլն: Մնացած բոլոր աշխատավորները, վորոնք չեն թված 41—48 տողերում, ցույց են տրվում 49-րդ տողում: «Այլ աշխատավորներ» (գրասենյակային անձնակազմ, պահեստների աշխատողներ, փոխադրողներ և այլն): Այն դեպքում, յերբ խանութի վարիչը հանդիսանում է միաժամանակ և գյուղսպառկոոպի նախահաշն, ապա նրանց ցույց են տալիս 41-րդ տողում, իսկ յեթե նա գյուղսպառկոոպի նախագահ չէ, ապա նրան ցույց են տալիս 41-րդ տողում, իսկ յեթե նա գյուղսպառկոոպի նախագահ չէ, ապա ցույց տալ 42-րդ տողում:

«Նշումներ աշխատողներ» — 50-րդ տողը պետք է

անպայման հաշվառար լինի աշխատողների առանձին կատեգորիաների գումարին (41-ից մինչև 49-րդ տողերում ցույց տված թվերի գումարին):

«Աշխատողների թիվը առ 1/4—1935 թ.» — ցույց է տրվում մշտական և ժամանակավոր (15-որից վոչ պակաս) աշխատողները, վորոնք աշխատել են խանութում 1935 թ. ապրիլի 1-ին: Այս թվում չպետք է ցույց տալ այն աշխատողներին, վորոնք հրավիրված են հատուկ աշխատանքների համար և չեն անցնում խանութի աշխատողների ցուցակում (չենքի վերանորոգման համար հրավիրված, բանջարեղենի մաքրում և այլն):

«Աշխատողների քիվը ցուցակագրման մոմենտին»: Նույնպես ցույց է տրվում աշխատողների թիվը ըստ առանձին կատեգորիաների, վորոնք գտնվում են խանութում ցուցակագրման մոմենտին, «ընդամենը աշխատողներ» տողում ցույց տված թիվը պետք է հաշվառար լինի հարցաթերթիկի 52-րդ հարցում խանութում լրացրած № 1 ձևի քարտերի քանակի թվին:

Յեթե այդ թվերը տարբերվում են, ապա անհրաժեշտ է առանձին թղթի վրա գրել տարբերության պատճառները և այդպիսին կցել բլանկին:

«Մարտ ամսվա աշխատավարձը ուրիշներով»:

Աշխատավարձի տեղեկությունները տրվում են մարտ ամսվա ոտճկացուցակի ավյալների հիման վրա:

Այդ ոտճկացուցակից պետք է վերցնել համաձայն սահմանված դրույքների (կամ ուղղակի հատավարձային գնահատումների) հաշվարկած աշխատավարձը, ներառյալ վերջինիս բոլոր գանձումները և պահումները (փոխառություններ, հարկեր, պահումներ ըստ կատարողական թերթիկի և այլն) հաշված նաև պրեմիաները, (պարգևատրումները յեթե նրանք կաղմում են աշխատավարձի մասը) ապրանքաշրջանառության պլանները կատարելու և գերակատարելու համար):

Միանվագ պրեմիաները աշխատավարձի մեջ չեն մտնում. չեն մտնում նաև աշխատավարձի վրայեկը (սոցալ, տեղկոմական տոկոսներ և բանուժի հետ կապ-

ված լրացուցիչ ծախսեր) մասնագիտական հագուստ, աշխատողների տեղափոխության ծախքեր և այլն)։

Հարց 51. «Այս ցուցակում հիշված, վոր ապրանքներով է կատարվել առևտուրը 1935 թ. 1-ին յեռամսյակում»։

Այս կետում թված 26 ապրանքներից անհրաժեշտ է ընդգծել այն ապրանքները, վորոնք չարունակաբար (այլ վոչ թե պատահամբ) վաճառվել են խանութում 1935 թ. 1-ին յեռամսյակում և ընդգծվածի գիմաց գրել «1»։

Հարց 52. «Խանութում լրացրած № 1 ձևի ֆարտերի ֆանակը»։ Այստեղ անհրաժեշտ է ցույց տալ ցուցակագրման ժամանակ խանութում աշխատող առևտրական անձնակազմի համար լրացրած ձև № 1 քարտերի քանակը։ (Այս թիվը պետք է հավասար լինի 50-րդ հարցում «Աշխատողների թիվը ցուցակագրման մոմենտին» սյունյակի «Ընդամենը աշխատողներ» տողում գրած թվին։

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ձեվ № 4 ԲԼԱՆԿԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Ընդհանուր ցուցմունքներ

1. ձև № 4 հարցաթերթիկով ցուցակագրվում են թե քաղաքներում և թե գյուղական վայրերում գտնվող վրանները, կրպակները, լարյոկները և կիոսկները։

Կրպակների, վրանների անվան տակ, ի տարբերություն խանութներից պետք է հասկանալ այնպիսի առևտրական շենք, վորտեղ առևտուր կատարվելու ժամանակ զնորդները ներս չեն մտնում։ Կիոսկներ կոչվում են ժամանակավոր հատուկ շենքեր, մեծ մասամբ փայտից շինված (բոլորական), վորտեղ գլխավորապես կատարվում է լրագրների և հանքային և սառը ջրերի, գարեջրի, ծխախոտի վաճառք։ Այստեղ ևս առևտրի

ժամանակ զնորդները ներս չեն մտնում առևտրական շենքեր։

2. Ցուցակագրմանը յենթակա յեն միայն 1935 թ. ապրիլի 15-ին գործող կրպակները և կիոսկները։

Ծանոթություն.— Ապրանքների հաշվառման կամ շենքի վերանորոգման պատճառով 15 որից վոչ ավել ժամանակով փակված ձեռնարկությունները համարվում են գործող և յենթակա յեն ցուցակագրության։

3. Ցուցակագրության յենթակա չեն՝

ա) չրջիկ մանրածախս ցանցը (սայլեր, սայլակներ, լատոկներ և այլն)։

բ) ցուցակագրման մոմենտին լուծարքի յենթարկված կրպակները և կիոսկները, յեթե նույնիսկ նրանք գործել են 1935 թ. ապրիլի 1-ին։

գ) շուկաներում (քաղաքներում) կոլտնտեսությունների, կոլտնտեսականների, մենատնտեսների և մասնավոր անձանց կողմից սայլերի և ձեռքի վրա կատարվող առևտուրը։

դ) այն արհեստանոցների առևտուրը, վորոնց հիմնական գործունեյությունը հանդիսանում է արտագրությունը և տնային իրերի վերանորոգումը։

4. Յեթե կրպակի կամ կիոսկի առևտուրը պատկանում է մասնավոր անձին, ապա հարցաթերթիկի վրա գրել «մասնավոր»։

Բացատրություններ բլանկի առանձին հարցերի վերաբերյալ

Հարցեր 1, 2 և 3. «Հասցեյի մասը»։ Առաջին տողում գրել հանրապետության և չրջանի անունը։

Քաղաքներում գտնվող կրպակների և կիոսկաների համար լրացնել յերկրորդ տողը՝ քաղաքի և փողոցի անունը ու տան №-ը։ Գյուղական վայրերում գտնվող կրպակների համար լրացնել 3-րդ տողը՝ գյուղիորհրդի և գյուղի անունը։

Հարց 4. «Բնակավայրերի տիպը» ըրջտեսուչը լրացնում է ժողտնտհաշվարչությունից ստացած քաղաքների և քաղաքատիպ վայրերի ցուցակի հիման վրա:

Հարց 5. «Քաղաքամասը»: Լրացվում է միայն Յերևանում:

Հարց 6. «Կրպակի անունն ու №-ը»: Այստեղ գրել կրպակի լրիվ անունը և ցույց տալ №-ը, յեթե այդպիսին կրպակը ունի:

Հարց 7. «Առևտրական կազմակերպության անունը, վորին պատկանում է կրպակը»: Այստեղ պետք է ցույց տալ այն առևտրական կազմակերպության լրիվ անունը, վորին անմիջապես յենթակա է կրպակը (մանրամասնությունը տես ձև № 2 հարցաթերթիկի 5-րդ հարցը կամ № 3-ի, 4-րդ հարցը):

Յեթե կրպակը յենթակա յե խանութին, ապա պետք է գրել այն առևտրական կազմակերպության անունը, վորին իր հերթին յենթակա յե խանութը:

Հարց 8. «Յեթե կրպակը պատկանում է խանութին, ապա մատնանշել նրա անունը»: Այս հարցը լրացվում է այն դեպքում, յեթե կրպակը անմիջականորեն յենթակա յե մի վորևե խանութին:

Հարց 9. Բացատրությունը տես ձև № 2-ի, 6-րդ հարցի կամ № 3 ձևի 5-րդ հարցի համար տված հրահանգներում:

Հարց 11. «Վորտեղ է գտնվում կրպակը»: Քաղաքներում գտնվող կրպակների համար այս հարցը պետք է լրացնել ձև № 2 հարցաթերթիկի 8-րդ հարցի համար տված հրահանգի համաձայն:

«Քաղաքի շուկայում» — պատասխանն ընդգծվում է այն կրպակների համար, վորոնք գտնվում են շուկաներում:

«Փարբիկա-գործարանային տերրիտորիայում»: Պատասխանը ընդգծվում է յեթե կրպակը գտնվում է գործարանների, ֆարբիկաների և հանքերի տերրիտորիայի վրա: Քաղաքներում գտնվող մնացած այլ կրպակների համար (յերկաթգծի կայարաններում, նա-

ղահանգիստներում կամ մի այլ տեղում) պետք է ընդգծել «քաղաքի այլ մասերում» պատասխանը:

Գյուղական կրպակների համար սույն հարցը լրացնելիս ղեկավարվել ձև № 3 հարցաթերթիկի 7-րդ հարցի համար տված հրահանգի ցուցմունքով:

Այն է՝ «շուկա ունեցող գյուղում» ընդգծվում է այն դեպքում, յերբ կրպակը գտնվում է շուկա ունեցող գյուղում, վորտեղ շարունակաբար տեղի յեն ունենում շուկաներ (տող 4), սովխոգում (տող 5...), յեթե կրպակը գտնվում է սովխոզի տերրիտորիայում և ֆարբիկ-գործարանային տերրիտորիայում (տող 2), յեթե կրպակը գործարանին կից գյուղումն է գտնվում:

Գյուղում յեղած մնացած այլ կրպակները ցույց տալ հարցաթերթիկի սույն հարցի 6-րդ տողում — «այլ գյուղական վայրերում»:

Հարց 12. «Կրպակի մասնագիտացումը»: Սույն հարցի լրացման կարգը տես ձև № 3 հարցաթերթիկի 8-րդ հարցի հրահանգը:

Հարց 13. «Քանի ժամ է աշխատում կրպակը նաշի րնդմիջումը հաշված»: Պետք է ցույց տալ աշխատանքի ժամերի թիվը դուրս յեկած ճաշամիջոցի ընդմիջումը:

Մյուս ընդմիջումները (ապրանքի բացակայություն կամ այլ պատճառներով) դուրս չպետք է գալ աշխատանքի ժամերից:

Հարց 14. «Գտնվում է արդյոք կրպակը յերկաթուղային կայարանի կամ նավահանգստին կից»: Գյուղական վայրերում գտնվող կրպակների համար տրվում է դրական պատասխան այն դեպքում, յերբ կրպակը գտնվում է յերկաթուղային կայարան կամ նավահանգիստ ունեցող գյուղում:

Քաղաքներում գտնվող կրպակների համար, ինչպես և խանութային ցանցի համար (տես ձև № 2 հարցաթերթիկի 8-րդ հարցի հրահանգը), դրական պատասխան տրվում է այն դեպքում, յեթե կրպակը գտնվում է յերկաթուղային կայարանի կամ նավահանգստի տերրիտորիայի վրա և գլխավորապես սպասարկում է ճանապարհորդներին:

Հարց 15. «Հեռավորութիւնը մինչև մոտակա յերկաթուղային կայարանը կամ նավահանգիստը»: (Լրացվում է միմիայն գյուղական ցանցի համար) լրացվում է գյուղական վայրերում գտնվող այն կրպակների համար, վորոնց հարցաթերթիկի նախորդ (14-րդ) հարցում տված է բացասական պատասխան:

Հեռավորութիւնը ցույց պետք է տալ մինչև մոտակա յերկաթուղային կայարանը կամ նավահանգիստը, վորտեղից գլխավորապես կատարվում է տվյալ կրպակի ապրանքների մատակարարումը: Հեռավորութիւնը ցույց տալ կիւմեարներով:

Հարցեր 16 և 17. Տես ձև № 3 հարցաթերթիկի 12 և 13 հարցերի հրահանգը:

Հարց. 20. «Աշխատողների թիվը առ 1/4—1935 թ»: Գրել մշտական և ժամանակավոր (15-որից վոչ պակաս) աշխատողների թիվը, վորոնք աշխատել են 1935 թ. ապրիլի 1-ին:

Հարց 21. «Աշխատողների մարտ ամսվա աշխատավարձը»: Գրել 1935 թ. մարտ ամսվա հասանելի բոլոր աշխատողների աշխատավարձի ընդհանուր գումարը: (աշխատավարձի մասին մանրամասն տես ձև № 2 հարցաթերթիկի 55-րդ հարցի և ձև № 3 հարցաթերթիկի 41—50-րդ հարցերի համար տված հրահանգները):

Հարց 22. «Աշխատողների թիվը ցուցակագրման մոմենտին»: Պետք է ցույց տալ ցուցակագրման մոմենտին կրպակի բոլոր աշխատողների ընդհանուր թիվը, անկախ նրանից աշխատել են նրանք ապրիլի 1-ին թե վոչ:

Հարցեր 23—26. «Շրջանառութիւնը ըստ վաճառքի» արվում է ուրբիներով (առանց կրպակների): 1-ին յեռամսյակի շրջանառութիւնը պետք է անպայման հավասար լինի հունվար, փետրվար և մարտ ամիսների շրջանառութիւնների գումարին (մանրամասնութիւնը շրջանառութիւնի մասին տես ձև № 3 հարցաթերթիկի 20—23 հարցերի հրահանգը):

Հարց 26. «Վոր ապրանքներով է կատարվել առեկ-

տուրը 1935 թ. 1-ին յեռամսյակում»: Ցուցակում թված 26 տեսակի ապրանքներից պետք է ընդգծել այն ապրանքները, վորոնք վաճառվել են կրպակում շարունակաբար (այլ վոչ թե պատահամբ) 1925 թ. 1-ին յեռամսյակում և ընդգծված տողի դիմաց գրել «1-ին»:

Հարց 27. «Կրպակում լրացրած ձև № 1 քարտերի թիվը»: Ցույց տալ կրպակում աշխատող անձնակազմի համար լրացրած ձև № 1 քարտերի թիվը: Քարտերի թիվը անպայման պետք է հավասար լինի ցուցակագրման մոմենտին կրպակում յեղած աշխատողների թվին, վորը ցույց է արված 22-րդ հարցում:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ձև 5 ՁեվԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Բխանկ՝ ՈՐՄ-երի, Փակ բանվորական կոոպ., ՁՐԿ), սովխոգրանկոոպների, Հաշմկոոպի առևտրական աբտելների և այլ սկզբնական առևտրական կազմակերպութիւնների համար (բացի գյուղսպառկոոպներից):

№ 5 ձևը լրացվում է՝

1) Սպառկոոպերացիայի քաղկոոպների, փակբանվ. կոոպ. (ՁՐԿ) համար:

2) Սպառկոոպերացիայի բանվորական կոոպերատիվների համար (սովխոգրանկոոպներ և այլն),

